ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-Ն:
ՀԱՍՑԵ՝ ք. ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32: ՀԵՌԱԽՈՍ՝ **(0285) 5 25 63 ● (091) 45 90 47 ● (077) 06 28 02**
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 5 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:
ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ
ՄԵՆՔ ՏԱՐԵԿԱՆ ԵՆՔ 10
Գինը՝ 100 դրամ:
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ ● № 28 (301)
www.syuniacyerkir.am

Նայապահը մեղք եղք...

Հարցազրույց խմբագրի հետ

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ. «Լինել մեր ժամանակի ճշմարիտ վավերագրողը. ահա «Սյունյաց երկրի» գլխավոր առաքելությունը»

ՖՈՏՈԼՈՒՐ

«Սյունյաց երկրի» տասնամյա ճանապարհի, առկա դժվարությունների ու ծրագրերի մասին է հարցազրույցը թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանի հետ:

– Պարո՛ն Ալեքսանյան, նախ շնորհավորում եմ Ձեզ՝ «Սյունյաց երկրի» տասնամյակի կապակցությամբ, մաղթում քաջառողջություն, ստեղծագործական հետագա ակտիվ աշխատանք:

– Շնորհակալություն, բայց կուզենայինք շնորհավորանքի խոսքերը նախեւառաջ ուղղել սյունեցիներին, թերթի ընթերցողներին, քանզի թերթը, ինչպես հռչակված է անվանման մեջ, նրանցն է: Ընթերցողն է եղել այն «ատյանը», որի առջեւ հաշվետու ենք եղել ամեն մի համար թողարկելիս: Ընթերցողի արձագանքով, գնահատանքով ու դրվատանքով է, որ ոգեւորվել ենք ու ձգտել չշեղվել ողջամտության ճանապարհից...

– Մի տեսակ արագ անցավ տասը տարին, կարծեք երեկ էր, որ լույս տեսավ թերթի անդրանիկ համարը:

– Բուռն եւ հակասական իրադարձություններով լեցուն տարիներ էին, բայց ամեն ինչ սկսվեց 2003-ի ամռանն ու աշնանը: Այդ ժամանակ Սյունիքի մարզպետի մամուլի քարտուղարն էի: Մարզպետ Էդիկ Բարսեղյանը դեմ չէր, որ ինքս դառնամ նոր պարբերականի հիմնադիր ու խմբագիր՝ համատեղությամբ: Քննարկումներ եղան նոր լրագրի անվան շուրջ: Ուզում էինք, որ Սյունիք անունն անպայման թերթի անվանման մաս կազմի, որովհետեւ թերթի հիմնական նպատակը մարզի առօրյայի լուսաբանումը պետք է լիներ: Մարզային նախկին պարբերական-

Շարունակությունը՝ էջ 10

Էջեր տարեգրությունից

Խոսք մեծաց

¶ñÇ·áñ Ü³ñ»Ï³óÇ

*...Թո՛ղ քանդվեն բոլոր այս
    գաղտնածածուկ
Որոգայթները սատանայական,
Մերկանան չարի խարդավանքներն
    ու գայթերը չքվեն,
Հնարադրված թակարդներն
    ամբողջ լինեն խայտառակ,
Երեւան հանվեն խայծերը կարթի,
Բացվեն նենգողի ծուղակներն անտես,
Վերանա վարմի ամեն ծածկ ու քող,
Որոմնաբույսերն այրվեն տապահար,
Բռնացողների դավերն ստանան
    անեծք ու նզովք,
Ծվատվի ցանցը խաբեբայական
    ի մահ որսողի,
Պարսվի պատրողի ամեն բարուրանք,
Ջրպարտիչների զենքերը հատնեն,
Ընկնեն սրերը մահ տարածողի,
Խորտակված թաղվի սադրողի
    ամեն մեքենայություն,
Ու տագնապողի կապանքները պիրկ՝
    քանդված արձակվեն:
Թող երեսպաշտի կեղծ կերպարանքն
    իր բուն տեսքն ստանա,
Ջախջախվեն մոլի հարձակումները
    ստահակների,
Ցիրուցան լինեն ոտիճ-ցեցերի
    տարմերն անպատկառ,
Պառակտված ցրվեն հրոսակները
    ավազակների,
Քայքայվեն խուժդուժ բարբարոսների
    հորդաները խոլ,
Քանդվեն ամրոցներն ստամբակների,
Կանխվեն լրբերի ամպրոպներն
    անզուսպ,
Փարատվի տարափն աղետաբերի,
Ցնդի եղյամը չարափառության:
Թող որ խորտակվեն ամբարտավանի
    եղջյուրները գոռ,
Բարձրաձողերը կեղծ դրոշների լինեն
    ջարդուփշուր
Փշրտվի հոխորտ փառքամոլությունը
    բարձրահոնների,
Ետ շպրտվի խեռ ճակատողների
    ամեն դիմարշավ.
Թող Բելիարի՝ թե՛ անմարմնական
    ու թե՛ մարմնավոր
Զորագնդերի դաշնը քայքայվի,
Մի ճամփով եկած՝ յոթով ետ փախչեն,
Հենց իրենք ընկնեն ինձ համար
    փորած վիհն անդնդախոր:
Թող անցնեն անդարձ նեղչի ձմեռներն
    այս ձանձրատաղտուկ,
Կտրվի կապը միաբանության
Հանապազաջան ավազակների.
Թող շողոքորթի համբույրը շողոմ
Ճակատիս միայն հարուցի նողկանք,
Խոշտանգիչների նետարձակումներն
    անհետ խափանվեն,
Սասանվի նավը խարդախողների,
Եվ ատամները կծոտողների
արմատահանվեն:*

«Մատյան ողբերգության», Բան Դ,Գ

Օրհնության խոսք հայ առաքելական եկեղեցու թեմերից

ՊԱՐԳԵՎ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Առաջնորդ թեմի հայոց Արցախայ

03 սեպտեմբերի 2013թ.

«Սյունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր պարոն Ս. Ալեքսանյանին

Հարգարժան պարոն Ալեքսանյան

Շնորհավորում ենք Ձեզ եւ Ձեր ղեկավարած թերթի ողջ աշխատակազմին թերթի հոբելյանի առիթով: Մաղթում ենք Ձեզ նորանոր ձեռքբերումներ՝ շարունակելու այդ կարեւոր առաքելությունը լրագրության ոլորտում եւ գոտեպնդելու մեր ժողովրդին պատմական Սյունյաց աշխարհում՝ հանուն մեր երկրի բարգավաճման ու անսասանության:

Ամենաբարի մաղթանք եւ օրհնությամբ:

ՄԱԿԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆ

Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ

04 սեպտեմբերի 2013թ.

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրություն

Մեծավ ուրախությամբ շնորհավորում ենք «Սյունյաց երկիր» տասնօրյա թերթի խմբագրակազմին եւ հղում մեր օրհնանքի խոսքը թերթի լույսընծայման 10-ամյակի կապակցությամբ: Թող Սյունյաց աշխարհի եւ առհասարակ համայն հայության հոգեւոր-մշակութային կյանքի լուսաբանման Ձեր ստանձնած նվիրական գործ-առաքելությունը կրի շարունակական ընթացք: Երիցս օրհյալ լինի տասնամյա Ձեր գործը, քանզի թերթի բազմաթիվ էջեր նվիրաբերված են հայոց սուրբ եկեղեցու եւ եկեղեցաշինության աստվածահաճո գործի հանգամանալից քննությանն ու լուսաբանմանը:

ԱԲՐԱՀԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԿՐՏՉՅԱՆ

Հայ առաքելական եկեղեցու Վայոց ձորի թեմի առաջնորդ

5 սեպտեմբերի 2013թ.

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմին

Շնորհավորում եմ Սյունյաց մեր հարազատ ժողովրդին՝ «Սյունյաց երկիր» թերթի տասնամյակի առիթով:

Ազգային գաղափարների ու ինքնատիպ, աստվածային ազատ խոսքի կենտրոն պատմական Տաթեւից սնվող սյունեցին արժանի է մերօրյա ազատ խոսքի ու մտքի, որի կրողն է «Սյունյաց երկիրը»:

Մեր գնահատանքն ու օրհնությունը թերթի գլխավոր խմբագիր պարոն Սամվել Ալեքսանյանին եւ թերթի ողջ անձնակազմին, թղթակիցներին ու գրչակիցներին, աջակիցներին ու ընթերցողներին:

Թող Աստված օրհնի ազատ մարդու իրավունքին եւ հանուն արդարության ու հայրենասիրության պայքարին միտված ձեր ուղին:

Լուսանկարը՝ Գ. Սահակյանի

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ» ԹԵՐԹԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ 10-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ
Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար

«Սյունյաց երկիր» թերթը տասը տարեկան է: Անցած տարիների ընթացքում այս պարբերականը բազմադեմ ու տարաբնույթ լրատվամիջոցների շարքում ունեցավ իր պատվարժան ու հաստատուն տեղը: Որդեգրելով մեր ժամանակներին հարիր աշխատաոճ ու չափանիշներ՝ «Սյունյաց երկիր» թերթը կարողացավ ստեղծել իր ձեռագիրն ու կերպարը:

Միշտ լինելով դեպքերի եւ իրադարձությունների կենտրոնում, ձեռքը՝ ժամանակի զարկերակին, իր ազգաշահ ու հայրենաշեն շեշտադրումներով ազգային համերաշխություն քարոզող թերթը, իրավամբ, նվաճեց հարգանք ու վստահություն, որն այնքան պակասում է այսօր հայկական լրատվամիջոցներին:

Իր համարձակ, հավասարակշիռ, սուր, օբյեկտիվ հրապարակումներով «Սյունյաց երկիրն» ապացուցեց պատեհապաշտությանը տուրք չտալու, իր սկզբունքները պահպանելու հաստատակամությունը: Սա այն եզակի թերթերից է, որ պարբերաբար անդրադառնում է բանակաշինության խնդիրներին, զինված ուժերում ընթացող բարեփոխումներին: Նրա էջերում քննարկվում են պաշտպանության ոլորտի հոգսերն ու խնդիրները, ձեռքբերումներն ու բացթողումները, կարեւորվում են ազգային բանակի ուժն ու դերը, մարմնավորվում է հայ սպայի կերպարը: Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ երախտագիտություն հայտնել բանակի բարեկամին՝ «Սյունյաց երկիր» թերթին: Նման սրտացավություն ու բարեհաճ վերաբերմունք այսօր բանակին շատ է հարկավոր:

Շնորհավոր ծնունդ, «Սյունյաց երկիր»: Թող ընթացքդ լինի հարատեւ, արգասաբեր ու բեղուն՝ ի նպաստ մեր հայրենիքի, ժողովրդի ու պետականության: ■

ԲՈԼՈՐ ՍՅՈՒՆԵՑԻՆԵՐԻՍ ԹԵՐԹԸ

ՄԵՐՈՒԺԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ
ՀՀ ԱԺ պատգամավոր

«Սյունյաց երկիրը» դառնում է տասը տարեկան, եւ չեմ կարող իմ շնորհավորանքի ու գնահատանքի խոսքը չուղարկել թերթի խմբագրակազմին:

Սյունիքի մարզի անցած տասը տարին, անկեղծ լինենք, հնարավոր չէ վերհիշել առանց «Սյունյաց երկրի», որ գտնվել է բոլոր իրադարձությունների կիզակետում եւ գրեթե բոլոր իրավիճակներում ունեցել իր ուրույն կարծիքն ու պատկերացումը: «Սյունյաց երկիրը» ոչ միայն մեր մարզի տարեգիրն էր այդ տարիներին, այլեւ բացախոսության, բազմակարծության, անկեղծ ու անկաշկանդ խոսքի հարթակը մարզում: Շատ կուզենայի, որ հետագա գործունեության մեջ թերթը մնար այդ դիրքերում: Ես մի քանի անգամ առիթ եմ ունեցել մոտիկից շփվել խմբագրության հետ: Եվ տեսել եմ այն, ինչ հեռվից ու առաջին հայացքից նկատելի չէ. ստեղծագործական, աշխատանքային մթնոլորտ, բծախնդիր ու պատասխանատու վերաբերմունք մեր մայրենի լեզվի ու խոսքի հանդեպ առհասարակ, օգտագործվող փաստերն ու թվերը ճշտելու հետեւողականություն: Դե իսկ սյունիքյան իրադարձությունների պարբերական վերլուծություններն ուղղակի անկրկնելի են: Ինձ հատկապես դուր է գալիս իրողությունը, որ թերթը բաց է բոլորի համար՝ անկախ կուսակցական պատկանելությունից, անկախ խմբագրի անձնական համակրանքներից ու հակակրանքներից: Դա մի արժանիք է, որ խոսում է ոչ միայն թերթի զորավորության, այլեւ այն մասին, որ «Սյունյաց երկիրը» բոլոր սյունեցիներիս թերթն է:

Ծնունդդ շնորհավոր, «Սյունյաց երկիր»: Թող երթդ անվախճան լինի: Դու, հիրավի, մեր լեռնաշխարհի արժանավոր զավակն ես, ինչը նշանակում է, որ մենք պետք է սիրով ու հոգատարությամբ շրջապատենք քեզ եւ օգնենք քո հարատեւմանը: Իսկ թերթի խմբագրին ու խմբագրակազմին՝ քաջառողջություն եւ ստեղծագործական նորանոր հաջողություններ, անձնական երջանկություն: ■

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄԻՆ

ՀԱՍՄԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ
Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար

Ջերմորեն շնորհավորում եմ Սյունիքի մարզային «Սյունյաց երկիր» թերթի հիմնադրման 10-ամյակը: Հիմնադրվելով 2003 թվականին՝ թերթն իր առաջին տասնամյակը նշանավորել է բովանդակալի ասելիքով՝ իր շուրջը համախմբելով իրենց ծննդավայրի անցուդարձով, մշակույթով ու գրականությամբ հետաքրքրվող Սյունյաց աշխարհի հասարակայնությանը:

Կարծում ենք, որ թերթի միջոցով ընթերցողը, մասնավորապես, երիտասարդ սերունդն ավելի հանգամանալի է ծանոթացել հերոսական լեռնաշխարհի փառավոր պատմությանը, նշանավոր սյունեցիների կյանքին ու գործունեությանը, մարզի պատմամշակութային հուշարձաններին:

Գովելի է, որ 2008 թվականից թերթը հրապարակվում է նաեւ էլեկտրոնային տարբերակով, ինչը մարզային թերթի համար կարելի է համարել մեծ ձեռքբերում:

Մեկ անգամ եւս շնորհավորելով «Սյունյաց երկիր» թերթին՝ հիմնադրման 10-ամյակի առթիվ, մաղթում եմ երկարակեցություն, բովանդակային բազմազանություն եւ հավատարիմ ընթերցողներ: ■

ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆ ԿԱՊԱՆԸ, ՈՐՏԵՂ ԾՆՈՒՆԴ Է ԱՌԵԼ ԵՎ ԳՈՐԾՈՒՄ Է «ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐԸ»

Շնորհավորանք Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից

«Սյունյաց երկիրը» նաեւ արցախցիների, ասել է թե՝ Փոքր Սյունիքի թերթն է

ԱՐԹՈՒՐ ԱՂԱԲԵԿՅԱՆ

**Գեներալ-լեյտենանտ
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության փոխվարչապետ**

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրին՝ Սամվել Ալեքսանյանին, ճանաչում եմ Արցախյան պատերազմի տարիներից. Գորիսի «Զանգեզուր» թերթի խմբագիրն էր: Թերթն այդ ժամանակ հետեւողականորեն ու հանգամանալից լուսաբանում էր գորիսեցիների մասնակցությունը պատերազմին եւ սահմանամերձում տեղի ունեցող իրադարձությունները, շրջափակված Արցախից տեղեկություններ հաղորդում իր ընթերցողին:

«Զանգեզուրի» որոշ ավանդույթներ, տեսնում եմ, փոխանցվել են «Սյունյաց երկրին»: Եվ մեր ազատամարտի մասնակիցներից շատերի, հերոսական այդ օրերի մասին ժամանակ առ ժամանակ կարելի է ուշագրավ հրապարակումներ տեսնել այդ պարբերականում, ինչը որոշակի ավանդ է աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության, զոհված ազատամարտիկների հիշատակը վառ պահելու գործում: Հաճելի է նկատել, որ «Սյունյաց երկրի» համար չկա Մեծ Սյունիք եւ Փոքր Սյունիք, այլ՝ մեկ ու ամբողջական Սյունիք: Եվ այդ ճշմարտության գիտակցումով է, որ թերթը տասը տարվա ընթացքում քանիցս առանձին համար եւ էջեր է նվիրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը, Արցախում իրականացվող խաղաղ ու ստեղծագործ աշխատանքին:

Ուզում եմ հուսալ, որ «Սյունյաց երկիրն» այսուհետ եւս շարունակելու է բարի այդ ավանդույթները եւ իր ճշմարիտ ու անաչառ խոսքով սատարելու է մեր ազգային իղձերի իրականացմանը:

Շնորհավորում եմ «Սյունյաց երկրի» հոբելյանը, խմբագրակազմին ցանկանում հետագա արժանապատիվ ընթացք: ■

ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ստեփանակերտի քաղաքապետ

Սիրելի՛ բարեկամներ

Ստեփանակերտի քաղաքապետարանի եւ անձամբ իմ անունից ընդունեք անկեղծ բարեմաղթանքներ եւ շնորհավորանքներ՝ «Սյունյաց երկիր» թերթի լույս ընծայման 10-րդ տարեդարձի կապակցությամբ:

Որպես անկախության ծնունդ, թերթը նշանակալի դերակատարություն ունի մարզի եւ հանրապետության քաղաքական-հասարակական կյանքում տեղի ունեցող իրադարձությունների, Սյունյաց աշխարհի պատմական, հոգեւոր-մշակութային հարուստ արժեքները պատշաճ ձեւով ընթերցողներին ներկայացնելու, երկրի բնակչության հիմնախնդիրները թափանցիկ ու անաչառ վերլուծելու, մեր ժողովրդի տարեգրության էջերը՝ մասնավորապես կապված արցախյան ազգային-ազատագրական շարժման հետ, օբյեկտիվ ու բազմակողմանի լուսաբանելու խնդրում:

Անուրանալի է թերթի դերը հանուն ընդհանուր նպատակի՝ ժողովրդի համախմբման, Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության կամրջման, հայոց երեւելիների հայրենասիրական վեհ գաղափարները հանրության շրջանում լայնորեն տարածելու եւ սերունդներին նժդեհյան ոգով դաստիարակելու գործում: Այդ տեսանկյունից խիզախ, ոգեշունչ ու լուսավոր ոչ քիչ հրապարակումների կարելի է հանդիպել «Սյունյաց երկում», որոնք շարժելով ընթերցողների հետաքրքրությունը, հատկապես բավարար ազդեցություն են գործում երիտասարդների վրա՝ նրանց «ուղղորդելով» քայլել պապերի ու հայրերի հերոսական ճանապարհով: Իսկ մենք լավ գիտենք, որ արցախցիների հետ հավասար Սյունյաց աշխարհի տղաները (արծիվները) խիզախաբար մարտնչել են արցախյան պատերազմում եւ արժանի հակահարված տվել թշնամուն: Չմոռանանք նաեւ այն իրողությունը, որ Արցախը դուրս գալով դաժան շրջափակումից, հենց Զանգեզուրով միացավ Հայաստանին, ու իրականություն դարձավ բոլորիս երազանքը…

Ուրախ եմ, որ այսօր էլ Արցախում տեղի ունեցող իրադարձությունները չեն վրիպվում թերթի տեսադաշտից ու ամենատարբեր առիթներով էջեր, մինչեւ իսկ նպատակային առանձին համարներ են նվիրվում ԼՂՀ կյանքին եւ առօրյային: Կրկնակի հաճելի է, երբ այդ գործը թերթի աշխատակիցների կողմից կատարվում է խանդավառությամբ ու սիրով, մեծ նվիրումով:

Համոզված եմ, որ «Սյունյաց երկիրն» այսուհետ եւս կնպաստի թերթի եւ ընթերցողների միջեւ փոխըմբռնման ամրապնդմանն ու խորացմանը, միշտ կմնա արցախցիների բարեկամը ու վստահորեն կշարունակի իր վեհ առաքելությունը:

Բարեկամներ

Վերստին շնորհավորում եմ խմբագրության կոլեկտիվին՝ առաջին տասնամյակի կապակցությամբ, մաղթում ստեղծագործական նորանոր հաջողություններ, նոր, պայծառ հոբելյաններ, ամենայն բարիք: ■

ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Արցախի ԳՄ վարչության նախագահ, «Եղիցի լույս» թերթի գլխավոր խմբագիր, Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«Սյունյաց երկիրը» երկիր է ներկայացնում

Սյունյաց երկիր… Որքան էլ փորձեմ նկարագրել, թե ինչպիսի զգացումներ են ծնում իմ մեջ այս երկու հատիկ բառերը, դժվար թե կարողանամ մտքիս ու սրտիս ասել. դրանց մեջ կա անսահման մաքրություն ու սեր, հավատ ու կարոտ, ալպիական շունչ ու ճախրանքների ազատ ոգի, աստվածային մի արարչություն, որի «էշխ ու տեսքից», անզուգական սիրուց գուսան են դառնում բոլորը, քարերն անգամ «երկինքն ի վեր հոսելու, երկինքն ի վեր խոսելու» ավյուն են առնում…

«Սյունյաց երկիր»…

Հրաշալի անուն է ընտրվել թերթի համար, անուն, որ թե խմբագրակազմին, թե ընթերցողներին հուշում է կոնկրետ ու որոշակի գաղափարներ, սկզբունքներ, շիտակ պահվածք ու գործունեություն, նվիրվածություն, անաչառ վերաբերմունք ու տոկալու, մաքառելու, հաղթելու մշտական ջանքեր, որոնց, ուրախությամբ արձանագրենք, հավատարիմ են նրա հիմնադիր-խմբագիր Սամվել Ալեքսանյանն ու թերթը ստեղծող լրագրողական խումբը, մի առաքելություն, որ, խոստովանենք, այսօր, ցավոք, շատ ու շատ հայատառ լրատվամիջոցների համար շարունակում է մնալ անհասանելի, մանավանդ՝ այս կամ այն կուսակցության, այս կամ այն խմբավորման խոսափողը դառնալու տխուր համապատկերում:

Հայ լեռնականի կրծքի տակ բաբախող սրտի զարկերը լսելի են թերթի էջերում եւ, որ ամենագլխավորն է, թերթը համարից համար դառնում է ավելի կատարյալ, ավելի մարտական, ավելի ամբողջական՝ շարունակելով իր բազմահազար ընթերցողների համար մնալ հանապազօրյա հացի, օդ ու ջրի պես պահանջված ու անհրաժեշտ:

«Սյունյաց երկիրը» նաեւ արցախցիներիս, ասել է թե՝ Փոքր Սյունիքի թերթն է:

Հայկական երկրորդ հանրապետության՝ Արցախի ժողովրդի, մեր գրական օջախի եւ բոլոր ընթերցողների անունից սրտանց շնորհավորում եմ թերթի խմբագրին՝ իմ լավ բարեկամ Սամվել Ալեքսանյանին, ամբողջ խմբագրակազմին՝ անզիջում, դժվարին պայքարով ու ծանր մաքառումներով վաստակած հոբելյանի առիթով եւ ցանկանում եմ, որ «Սյունյաց երկիրը» գալիք ժամանակներում եւս մնա որպես մեր ուղին լուսավորող անմար մի կերոն… ■

ՄՈՎՍԵՍ ՀԱԿՈԲՅԱՆ

ԼՂՀ ՊՆ - ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ

«Սյունյաց երկիր» թերթի հարգարժան խմբագիր, խմբագրության հարգելի աշխատակիցներ

Արդի դարաշրջանում, երբ կարեւորվում է տեղեկատվությունը, մամուլը դեպքերն արձանագրողի ու տարեգրողի դերից այդ դեպքերի վրա ներազդելու, գաղափարներ քարոզելու միջոցից բացի ձեռք է բերել նաեւ հասարակական գիտակցությունը փոխելու եւ հասարակական կարծիք ձեւավորելու գործառույթներ: Դա հատկապես վառ կերպով արտահայտված է Ձեր թերթի բավական հետաքրքիր ու բովանդակալից հրապարակումներում, որոնք միշտ էլ պահանջված են եղել ընթերցողների կողմից: Հայրենագիտական, պատմական ու այլ բնույթի նյութերը նպաստել են նաեւ երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակությանը, ինչը կարեւոր է մեր հայրենիքի պաշտպանների շարքերը գաղափարապես հասուն, գիտակից ու անձնվեր երիտասարդներով համալրելու համար:

ՊԲ ողջ անձնակազմի եւ անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ձեզ՝ թերթի տասնամյակի առթիվ եւ մաղթում նորանոր ստեղծագործական հաջողություններ, անձնական երջանկություն ու բարեկեցություն: ■

Սյունիքի մարզպետները



ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սյունիքի մարզպետ (2004-13թթ.)

Սյունիքը մարզ չէ, Սյունիքն աշխարհ է, երկիր է, ինչպես Պատմահայր Խորենացին է ասել: Եվ այդ աշխարհի արժանապատիվ տարեգիրը վերջին տասը տարում «Սյունյաց երկիրն» էր:

«Սյունյաց երկիրը» հայաստանյան տպագիր մամուլի ընտանիքում իր ուրույն եւ առանձնահատուկ տեղն ունի: Նա սովորական թերթ չէ, սովորական լրագիր չէ, այլ, եւ ավելի շատ, գիտական ու մշակութային երեւույթ: Հատկապես վերջին չորս-հինգ տարում նրա բացառիկ համարները նոր խոսք են Սյունիքի պատմության առանձին ու հերոսական դրվագների, Սյունյաց աշխարհի նշանավոր մարդկանց, Սյունիքի սրբավայրերի եւ բնակավայրերի մասին: Իսկ այդ պատասխանատու առաքելությունն իրականացնում է թերթի խմբագրությունը, որը Սյունիքում լուրջ կազմակերպության համբավ ունի, ինչի համար եւ մարզում վայելում է սյունեցիների հարգանքը:

Շնորհավորում եմ թերթի խմբագրակազմին, թերթի ընթերցողներին` հոբելյանի կապակցությամբ, ցանկանում ստեղծագործական նոր վերելք:

ԷԴԻԿ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Սյունիքի մարզպետ (2000-2004թթ.)

Ուրախ եմ, որ կանգնած եմ «Սյունյաց երկիր» թերթի հիմնադրման ակունքում: Տարիների հեռվից հետադարձ հայացք ձգելով` ավելի եմ համոզվում, որ ժամանակին ճիշտ եւ անհրաժեշտ քայլ եմ կատարել` ազատ ու անկախ թերթ հիմնադրելուն նպաստելով, ավելի եմ համոզվում, որ թերթն արդարացրել է սյունեցիների սպասելիքները:

«Սյունյաց երկիրն» իսկապես ընթերցվող թերթ է: Ինքս էլ երբեմն-երբեմն հնարավորություն եմ ունենում ընթերցել այդ պարբերականը, ծանոթանալ մարզային անցուդարձին, մեր լեռնաշխարհի նշանավոր մարդկանց, պատմամշակութային վայրերին ու պատմական իրադարձություններին:

Թերթի խմբագրին` Սամվել Ալեքսանյանին, ընդունում եմ որպես օբյեկտիվ, անաչառ, անկողմնակալ, ճշմարիտ խոսքը դավանող եւ Սյունիքի մարզը լավագույնս ճանաչող անձնավորություն: Մոտիկից ճանաչում եմ նաեւ խմբագրակազմի գրեթե բոլոր աշխատակիցներին, ովքեր պրոֆեսիոնալի, լրագրողական գործին նվիրված մարդկանց համբավ ունեն:

Ընդհանրապես միշտ կարեւորել եմ լրատվամիջոցների եւ մասնավորապես տպագիր մամուլի դերը: Ինչպես նախկինում, այնպես էլ հիմա հրապարակայնությունն ու թափանցիկ աշխատաոճը համարում եմ մեր առաջընթացի լրջագույն պայմանը, իսկ այդ գործում, առնվազն Սյունիքի մարզի մասշտաբով, անփոխարինելի է «Սյունյաց երկրի» դերը:

Շնորհավորում եմ թերթի խմբագրին, խմբագրակազմին, ընթերցողին ու բոլոր սյունեցիներին` մարզային «Սյունյաց երկիր» լրագրի հոբելյանի առթիվ եւ մեր լեռնաշխարհին ցանկանում հետագա առաջընթաց: Վստահ եմ, որ թերթն այսուհետ եւս իր համեստ ներդրումը կունենա Սյունիքի ամրապնդման ու հզորացման գործում:

ՌՈՄԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Սյունիքի մարզպետ (1998-2000թթ.)

«Սյունյաց երկիրը» տասը տարեկան չէ, հարյուր տարեկան է, եթե նկատի ունենանք թերթի իմաստնությունն ու ասված (ասվող) խոսքի խորությունն ու կշիռը, եթե հիշենք, թե ինչ արհավիրքների միջով է անցել խմբագրակազմը:

Շատ ուրախ եմ, որ այդքան դժվարություններ ապրած ու ապրող թերթն ինքնուրույնությունը, ազատ, անկաշկանդ մտածելու եւ արտահայտվելու կարողությունը չի կորցրել, ինչը մեր օրերում արդեն իսկ սխրանք է:

Սամվել Ալեքսանյանի հետ համատեղ ճանապարհ ենք անցել, եւ քանիցս հայտնել եմ պարբերական մամուլի վերաբերյալ իմ պատկերացումները, այն է` թերթին խանգարել, խոչընդոտել չի կարելի, թերթին ինչ-որ պարտադրանք ներկայացնել չի կարելի, իշխանություններն ու իշխանավորները թերթին միայն պետք է օգնեն, քանի որ այն վավերագրում է մեր ապրած ժամանակն ու հանձնում գալիք սերունդներին:

«Սյունյաց երկիրը» պահանջված թերթ է Սյունիքում: Եզակի օրինակներից մեկն է, որ կարողացավ դիմանալ ժամանակի արհավիրքներին:

Ցավոք, մեր հանրապետությունում շատ քիչ թերթեր են մնացել, որի ամեն մի համարի թողարկմանը կարելի է սպասել: Այդ քչերից մեկը «Սյունյաց երկիրն» է:

Սրտանց շնորհավորում եմ թերթի խմբագրին ու խմբագրակազմին եւ ակնկալիքս հայտնում, չնայած գիտեմ, որ սպասելիքս այնքան էլ դյուրին իրագործելի չէ. ուզում եմ, որ թերթն ավելի շատ ինքնուրույն լինի եւ իր` արդեն հաստատված ոճին հավատարիմ:

Հարյուր տարեկան «Սյունյաց երկրին» հավերժական ջահելություն եմ ցանկանում, ինչպիսի ջահելություն որ ապրում է հիմա:

ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Սյունիքի մարզպետ (1996-98թթ.)

Առաջին հայացքից պարզ թվացող առաքելություն է «Սյունյաց երկրի» հոբելյանի մասին խոսք ասելը, բայց… Հոգիս ալեկոծվեց, եւ մտաբերեցի մարզպետարանի, մարզային կառույցների ձեւավորման դժվարին սկիզբը, երբ կարեւորեցինք նաեւ մարզային լրատվամիջոցներ ունենալու խնդիրը, ինչը կյանքի կոչվեց Սամվել Ալեքսանյանի անմիջական գործունեությամբ: Եվ 1996թ. մայիս-հունիսին արդեն ունեցանք մարզային թերթ, ռադիո, հեռուստատեսություն:

«Սյունյաց երկիրը», անշուշտ, այդ ժամանակ հիմնադրված մարզային թերթի տրամաբանական շարունակությունն է, սակայն «Սյունյաց երկրի» խմբագիրն ու խմբագրակազմն ի սկզբանե հայտնվեցին այլ իրավիճակում, բացարձակապես նոր իրողությունների դեմ հանդիման: Պետք էր ե՛ւ ավանդույթները շարունակել, ե՛ւ սեփական դեմքը պահել, ե՛ւ կայանալ ու գոյատեւել, ապրել: Իսկ սեփական դեմք ունենալն ու պահելն ահավոր դժվար ու բարդ, ներկա իրողությունների մեջ գրեթե անլուծելի խնդիր է: Բայց, փառք Աստծո, թերթի կայացումը տեղի ունեցավ` պահելով իր սեփական դեմքը: Գաղտնիքն, ըստ իս, առաջին հերթին պայմանավորված էր խմբագրի կերպարով: Ի դեպ, սյունեցու ընդհանրական կերպարի` իմ կողմից դավանած արժեքի ու խմբագրի մարդկային, քաղաքացիական եւ մասնագիտական արժանիքների միջեւ հոգեբանական համատեղելիություն ու ներդաշնակություն կա: Եվ, ի զարմանս շատերի (նաեւ ինձ)` «Սյունյաց երկիրը» մարզային կարգավիճակն աստիճանաբար հաղթահարեց ու դարձավ համահանրապետական լրագիր: Առավել զարմանալի է, որ այսօր, ի պատիվ խմբագրի ու խմբագրակազմի, թերթի յուրաքանչյուր համարին սպասում են ե՛ւ ընդդիմությունը, ե՛ւ դիմությունը, ե՛ւ իշխանավորն ու ռամիկը` ամեն ոք դրա համար ունենալով իր մոտիվը:

Ի սրտե ասում եմ` ապրեք ու գիտցեք` «Սյունյաց երկրին» սպասում ենք…

«Սյունյաց երկրի» անդրանիկ համարը

Էջեր պատմությունից

Մարզի քաղաքապետերի ուղերձը

Լուսանկարը՝ Հ.Գեւորգյանի

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կապանի քաղաքապետ

Շնորհավորում եմ «Սյունյաց երկիր» թերթի կոլեկտիվին ու նրա ընթերցողներին՝ հիմնադրման 10-ամյակի կապակցությամբ, մաղթում ստեղծագործական նորանոր հաջողություններ: Կարեւորում եմ «Սյունյաց երկրի» էջերում հաճախակի հանդիպող այլակարծությունը, նաեւ այն, որ թերթը յուրօրինակ կամուրջ է մարզի ու արտերկրում բնակվող սյունեցիների համար: Ստեղծման օրվանից «Սյունյաց երկիրը» քննադատել ու քննադատվել է, սակայն, ամենակարեւորը, միշտ եղել է սպասված բոլորի համար: Մեկ տասնամյակի ընթացքում թերթը կարողացել է հաղթահարել բազմաթիվ խոչընդոտներ ու ապացուցել, որ կարող է ոչ միայն գոյատեւել, այլեւ լինել պահանջված: Ծննդյան 10-րդ տարեդարձի առիթով կանաչ ճանապարհ եմ մաղթում «Սյունյաց երկրին» եւ արգասաբեր աշխատանք՝ թերթի աշխատակազմին:

ԱՂԱՍԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

Սիսիանի քաղաքապետ

Մարզային «Սյունյաց երկիր» թերթի խմբագրության աշխատակիցներին շնորհավորում եմ թերթի հիմնադրման 10-ամյակի կապակցությամբ:

Թերթի հոբելյանը հարգանքի ու ջերմ գնահատանքի արժանի իրադարձություն է հայրենական լրագրության պատմության մեջ: Տասը տարի բեղուն աշխատանքով իմաստնացած, վաստակաշատ մի լրատվամիջոց է «Սյունյաց երկիրը», որը կոչված էր անցած ճանապարհի ողջ ընթացքում անձնվիրաբար ծառայել իրեն վիճակված բարդ ու պատասխանատու առաքելությանը՝ լուսաբանել, վեր հանել ու ներկայացնել մարզի տարբեր համայնքներում առկա խնդիրները, մարդկանց հոգսերը, իրադարձությունները:

Մեկ տասնյակ տարի «Սյունյաց երկիրն» ամենատարբեր ոլորտների թեմաների լուսաբանման ասպարեզում դրսեւորվել է իրականության լիարժեք ընկալում, համակողմանի եւ անաչառ իրազեկվածություն:

«Սյունյաց երկիր» թերթի աշխատակիցների ու հազարավոր ընթերցողների սերտ համագործակցությունը մնում է հետագա բոլոր հաջողությունների երաշխիքը:

Վստահ եմ՝ «Սյունյաց երկիր» թերթը դեռ շատ ասելիք ու անելիք ունի: Մաղթում եմ ստեղծագործ աշխատանք ու նորանոր հաջողություններ՝ ազգային ոգու վերածննդի եւ հայրենանվեր սերունդ դաստիարակելու գործում:

Լուսանկարը՝ Գ.Սահակյանի

ՆԵԼՍՈՆ ՈՍԿԱՆՅԱՆ

Գորիսի քաղաքապետ

ԱՐՇԱՎԻՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մեղրու քաղաքապետ

Հարգարժա՛ն Սամվել Լազրի

Մեղրու քաղաքապետարանի, համայնքի բնակիչների եւ անձամբ իմ անունից սիրով շնորհավորում եմ Ձեզ, ստեղծագործական ողջ անձնակազմին՝ «Սյունյաց երկիր» թերթի հիմնադրման 10-րդ տարեդարձի առթիվ: «Սյունյաց երկիրը» մեզ համար լրատվամիջոց է, որ անգնահատելի ավանդ է ունեցել ինչպես մեր համայնքի, տարածաշրջանի, այնպես էլ մարզի ամենատարբեր բնագավառներում առկա հիմնախնդիրների բացահայտման, լուսաբանման եւ լուծման ուղղությամբ: Դա մի թերթ է, որն իր քաղաքական հասունությամբ, քաղաքացիական ակտիվ դիրքորոշմամբ ու պետական մտածողությամբ միշտ կանգնած է եղել ու է մեր անկախ պետականության ամրապնդման դիրքերում: «Սյունյաց երկիրը» տպագիր մի լրատու է, որն անուրանալի ավանդ ունի հատկապես մեր մարզի պատմամշակութային արժեքների բացահայտման ու պահպանման, բնակավայրերի տարեգրության լուսաբանման, սյունյաց տաղանդավոր, նշանավոր զավակների կյանքի ու գործունեության ներկայացման ուղղությամբ: «Սյունյաց երկիրը» ստեղծագործական մի կոլեկտիվ է, որ երբեք չի երերացել ստի ու կեղծիքի դեմ պայքարելիս, դա մի պարբերական է, որի լրագրողներն իրենց գրչով, քաղաքացիական կեցվածքով միշտ կանգնում են անմեղի, անօգնականի, հանրային հնչեղության հարց բարձրացնող հասարակության կողքին: Որքանով մեզ հայտնի է, թերթին հետաքրքրությամբ է սպասում ամեն մի ընթերցող, որը մամուլի այս բազմազանության պայմաններում արդեն իսկ լուրջ

Լուսանկարը՝ Գ.Սահակյանի

երկիր» թերթի հիմնադրման 10-րդ տարեդարձի առթիվ: «Սյունյաց երկիրը» մեզ համար լրատվամիջոց է, որ անգնահատելի ավանդ է ունեցել ինչպես մեր համայնքի, տարածաշրջանի, այնպես էլ մարզի ամենատարբեր բնագավառներում առկա հիմնախնդիրների բացահայտման, լուսաբանման եւ լուծման ուղղությամբ: Դա մի թերթ է, որն իր քաղաքական հասունությամբ, քաղաքացիական ակտիվ դիրքորոշմամբ ու պետական մտածողությամբ ձեռքբերում է:

«Սյունյաց երկիրը» մեծ աջակից է նաեւ համայնքային խնդիրների լուծման գործում: Ուստի կրկին շնորհավորում եմ մեր բարեկամ լրատվամիջոցին՝ հիմնադրման տասնամյակի առթիվ եւ մաղթում ստեղծագործական նոր թռիչքներ:

Թող «Սյունյաց երկիրը» Սյունյաց աշխարհի նման հարատեւի՝ ի շահ համայնքների, մարզի զարգացման, ի շահ արդարության ու բարու:

Լուսանկարը՝ Հ.Գեւորգյանի

Սյունյաց աշխարհը դարերի յուրահատուկ պատմություն ունի: Եվ այդ պատմության վերջին տասը տարվա շարադրողն ու գալիքին փոխանցողը «Սյունյաց երկիր» պարբերականն է: Այսօր էլ թերթը մնում է սյունիքյան իրականության հայելին: Բացի այդ թերթն ակտիվ, փաստացի մեկնաբանություններով, սուր եւ գործնական հարցադրումներով մշտապես ձգտել է ազդել մարզի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, հոգեւոր-մշակութային գործերի վրա: Ու միշտ էլ զգացվել է թերթի սթափեցնող, զգաստացնող, ողջամտության մղող հեւքը:

Չի կարելի չնկատել ու չգնահատել թերթի խմբագրակազմի համառ ու հետեւողական գործելակերպը. անցավ բազում փորձությունների միջով, բայց եւ մնաց կանգուն, իր հավատամքին անդավաճան:

Շնորհավորում եմ «Սյունյաց երկրի» տասնամյակը, խմբագրությանը մաղթում հետագա բեղմնավոր գործունեություն:



ՄԽԻԹԱՐ ՋԱԲԱՐՅԱՆ

Ագարակի քաղաքապետ

«Սյունյաց երկիրը» ծնվեց, հասակ առավ ու ընթերցողին ներկայացավ բոլորիս աչքի առջեւ: 2008 թվականին, երբ առաջին անգամ առաջադրվեցի քաղաքապետի թեկնածու, տեսա նաեւ, որ թերթն իսկապես բացախոսության հարթակ է, ինչը մեր օրերում մարզին պատիվ բերող հանգամանք է:

Հետագայում, երբ արդեն քաղաքապետ էի, տեսա ու համոզվեցի, որ «Սյունյաց երկիրը» նաեւ լավ ու հուսալի գործընկեր է, մարզի խնդիրներով մտահոգ լրատվամիջոց: Մեր կյանքի առանձին երեւույթների հանդեպ ունենալով միանգամայն ինքնատիպ ու յուրօրինակ կարծիք՝ թերթը, այնուամենայնիվ, հասցնում է տեսնել համայնքներում կատարվող ամեն մի լավ գործ եւ ձգտում է անպայման լուսաբանել: Երեւի դա է պատճառը, որ մարզի ամեն մի տարածաշրջանում ու համայնքում, որքանով նկատել եմ, «Սյունյաց երկիրն» իրենցն են համարում:

2009 թվականին Ագարակ քաղաքի հիմնադրման հոբելյանի առիթով, «Սյունյաց երկիրը» հատուկ համար թողարկեց: Ուշագրավ գործ էր. առաջին անգամ փորձ արվեց ընդհանուր գծերով ամբողջացնել մեր քաղաքի պատմությունը: Այսօր էլ, եթե չեմ սխալվում, Մեղրու տարածաշրջանին նվիրված առանձին համարի նախապատրաստություն է տեսնում խմբագրությունը:

Մի խոսքով՝ «Սյունյաց երկիրը» զբաղվում է մարզին անհրաժեշտ ու պահանջված գործով: Եվ զբաղվում է ամենայն լրջությամբ, պատասխանատվությամբ ու գիտական նախանձախնդրությամբ, ինչը չի կարելի չողջունել:

Շնորհավորում եմ «Սյունյաց երկրի» հոբելյանը, նրա խմբագրակազմին ցանկանում անխափան երթ, հետագա ստեղծագործական հաջողություններ: Կցանկանայի, միաժամանակ, բարելավված տեսնել թերթի առաքման համակարգը:

ՀՐԱՉ ՁԱԲՐԱՅԱՆ

«ԴՓՄ-Կապան» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն

Հարգելի գործընկերներ

Սրտանց շնորհավորում եմ Սյունիքի մարզային թերթի հոբելյանական 10-րդ տարեդարձի առթիվ:

Ուրախ եմ, որ Սյունիքն այն եզակի մարզերից է, որտեղ թերթը, որպես լրատվամիջոց, գոյություն ունի եւ կատարում է իր ծեռագրին հարիր, սյունեցուն տեղեկատվություն հասցնելու, շատ դեպքերում՝ անշնորհակալ գործը:

Մերօրյա ընթացքի արխիվային յուրօրինակ պահոց է թերթը, այս դեպքում՝ մեր ապագա սերունդների համար: Միշտ չէ, որ թերթը բարի աչքով է նայել մեր ընկերության առջեւ ծառացած մարտահրավերներին եւ աշխատանքներին, սակայն, ամենով հանդերձ, կարծում ենք, եթե շիտակ խոսք կար ասվածի մեջ ու հետին մտքեր չի պարունակել, ապա դա եւս իր նպաստն է բերել մեր աշխատանքներին: Ցանկանում եմ, որ ձեր հետագա ընթացքը եւս անվարան լինի ու ծառայի ոչ թե առանձին մարդկանց խմբի, այլ բովանդակ Սյունիքի բնակչությանը:

Սյունիքի արժանապատվության արթուն դիրքապահը

ԱՋԱՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ

«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ տնօրեն



Երբ լույս աշխարհ եկավ «Սյունյաց երկիրը»՝ արդեն իսկ խորապես ճանաչում էր Սյունիքի մարզը՝ Նռնաձորից ու Ծիրանաձորից մինչեւ Գոռհայք: Դրանում կարելի է համոզվել լրագրի ամեն մի համարն ընթերցելիս: Դա շատ կարեւոր արժանիք է, որը ոչ բոլորին է հաջողվում ձեռք բերել նույնիսկ տարիների ընթացքում: Դա նշանակում է, որ փոքր հայրենիքի զգացողությունն ու հայրենի երկրամասի հանդեպ սրտացավությունն ի սկզբանե ընկած են եղել նրա գործունեության հիմքում: «Սյունյաց երկիրը» սյունեցու պատվախնդրության, արժանապատվության արթուն դիրքապահն է, մեր այսօրվա ընթացքը վավերագրողն ու ապագա սերունդներին հանձնողը:

Խաղաղ ուժի, ստեղծագործ ոգու մշտական ներկայությունն եմ տեսնում թերթի վարքուբարքում (որքան էլ այդպես չէ առաջին հայացքից), որովհետեւ դիտարկող, վավերագրող, գնահատող, հուշող լինելուց, ազատության եւ անկաշկանդության ոգի լինելուց առաջ իրեն վերապահում է Սյունիքի համար իր բաժին պատասխանատվությունն ունեցողի դեր:

Երբեմն մեզ թվում է, թե մեր գործերում եւ հանրային կյանքում միայնակ ենք: Բայց ամենափոքր առիթի դեպքում հանկարծ տեսնում ենք, որ յուրաքանչյուրս «կազմված» ենք գաղափարակիցներից, համախոհներից, հարազատներից ու մերձավորներից: Եվ հարազատների ու մերձավորների մեջ տարիներ շարունակ ահա տեսնում ենք «Սյունյաց երկրին»: Եվ այդ ժամ, որերորդ անգամ, համոզվում ենք, որ «Սյունյաց երկիրը» բոլորինս է, մեր հարազատն ու մերձավորն է:

Տպավորություն ունեմ, որ թերթի ամեն մի հրապարակում՝ վերլուծական, քննադատական հոդվածներից մինչեւ առօրյա անցուդարձի թվարկում, հարգանք ու մտահոգություն է դժվարությունների մեջ հայտնված մարդու նկատմամբ, մեր երկրամասի նկատմամբ: Եվ այդ ուղեգծից թերթը չի հրաժարվել նույնիսկ ամենաշփոթ օրերին:

Ես ծանոթ չեմ ժուռնալիստիկայի նրբություններին, բայց մի բան ինձ համար ակնհայտ է՝ իսկական լրագրությունը սակավ ընտրյալների գործն է: Ու այդ սակավ ընտրյալներից է բաղկացած «Սյունյաց երկրի» աշխատակազմը, որի շնորհիվ թերթը (չունենալով նույնիսկ աշխատանքի շատ թե քիչ նորմալ պայմաններ) արժանապատվորեն անցավ տասը տարվա բուռն իրադարձությունների ու ալեբախումների միջով եւ մտավ Սյունիքի պատմության մեջ:

Շնորհավորում եմ մեր սիրելի թերթի՝ «Սյունյաց երկրի» հոբելյանը եւ մաղթում հաջողություններ իր ազգանպաստ գործերում:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՄ «ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿՐԻ» ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄԻՆ

ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Óâàæàåì ûé ã-í Àëåêñàíÿí!

Îòèìåíè âñåãî êîëëåêòèâà Àãàðàêñ-

Հավատարիմ՝ ճշմարիտ խոսքի առաքելությանը

ՍԱՍՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Որոտան հէկի» ՓԲԸ տնօրեն

Անկախության հաստատումից ի վեր մեր ազգային իրականության մեջ գլխապտույտ արագությամբ ծնունդ առան հազարանուն ու հազարերանգ թերթեր, ամսագրեր, որոնցից շատերն իրենց ասելիքով սպառվեցին այնպես, ինչպես հայտնվել էին եւ մարվեցին աննկատ ու անձայն, չնայած բոլորն էլ ասպարեզ էին մտնում «ժամանակի հրամայական» լինելու հավակնությամբ: Միայն քչերը կարողացան իրենց ասելիքով, բովանդակությամբ, առաքելությամբ ու սկզբունքայնությամբ ներդաշնակվել ժամանակի էությանը, կարողացան լսելի դարձնել իրենց ասելիքը: Ահա այդ եզակիներից է «Սյունյաց երկիրը»:

Հեշտ ու հարթ չի եղել «Սյունյաց երկրի» գործունեության ընթացքը: Այն հաղթահարել է բազում օբյեկտիվ ու սուբյեկտիվ դժվարություններ, բայց, որ ամենակարեւորն է, միշտ հավատարիմ է մնացել ճշմարիտ, համարձակ խոսքի իր առաքելությանը: Թերթի կենսագրությունը եւ բովանդակությունը վկայություն են այն բանի, որ նա ժամանակների անհրաժեշտությունից ծնված երեւույթ է, արդեն իսկ ժամանակի մեջ քննություն բռնած, մայրաքաղաքային մամուլի տենդերից հեռու, լուրջ, հավասարակշիռ, հստակ ասելիքով, հեռու քաղաքական էժանագին շահարկումներից ու չհիմնավորված հավակնություններից: «Սյունյաց երկիրը» միայն թերթ չէ: Այն ավելին է, քան սովորական մամուլի միջոցը: Տարիների ընթացքում Սյունիքի եւ նրա բնակավայրերի պատմության, ազգագրության, պատմական աշխարհագրության, խոշորագույն մշակութային գործիչների ժառանգության ուսումնասիրության եւ այն մատուցելու ասպարեզում այնքան մեծ գործ կատարեց, որ չի արել ոչ մի գիտական կենտրոն: Եվ որ ամենակարեւորն է, դրանք աչքի են ընկնում իրենց խիստ գիտականությամբ ու գիտական էթիկայի պահպանմամբ: Շնորհավորում եմ «Սյունյաց երկրի» տասնամյակը, շնորհավորում եմ նրա ստեղծագործական անձնակազմին, ում շնորհիվ հանրապետական մամուլի աշխարհում թերթը կայուն տեղ վաստակեց՝ դառնալով մեր՝ սյունեցիներիս հպարտությունը:

Շնորհավոր տասնամյակդ, «Սյունյաց երկիր»:

Շնորհակալություն ձեզ, «Սյունյաց երկիր» ստեղծած ու ստեղծող սյունեցիներ:

Կեցցեք....

Ï ÎËÎÂÈÍÊÈ Ñ.Ï. è âåñü êîëëåêòèâ "Àãàðàêñêîãî ìàäíîìîëèáåäíîâîãî êîìáèíàòà"

Ãëàâíî ìó ðåäàêòîðó ãàçåòû "Ñþíäö Åðêèð" ã-íó Ñàìâåëó Àëåêñàíÿíó

êîãî ìåäíî-ìîëèáäåíîâîãî êîìáèíàòà è îò ñåáÿ ëè÷íî ïîçäðàâëÿþ èçäàíèå "Ñþíäö Åðêèð" ñ òîðæåñòâåííûì ñîáûòèåì - 10-ëåòèåì þáèëåéíûì! Ïðèìèòå íàøè ñàìûå òåïëûå è èñêðåííèå ïîæåëàíèÿ äàëüíåéøåãî ðàçâèòèÿ è ïðîöâåòàíèÿ. Æåëàåì âñåì ñîòðóäíèêàì ðåäàêöèè çäîðîâüÿ è áîäðîñòè ïðîôåññèîíàëüíûõ óñïåõîâ, è íàäååì ñÿ, ÷òî Âàøà ãàçåòà åùå äîëãèå ãîäû áóäåò ðàäîâàòü íàñ ñâîèì ïóáëèêàöèÿìè! Çà ýòî äåñÿòèëåòèå ðåäêîëëåãèàëüíàÿ ãàçåòà "Ñþíäö Åðêèð" çàñëóæåííî ðåîðãàíèçîâàí è ïîäàòåëåé ñâîáîäíî ÷èòàåò ñòàòüè ïî ïðîáëåìàì ñîöèàëüíî-ýêîíîìè÷åñêîãî ðàçâèòèÿ ñòðàíû è ðåãèîíà, ïîçèöèîíèðóåò ñåáÿ êàê ñòîðîííèê ñòàáèëüíîñòè è ïîðÿäêà è ïîçèöèîíèðóåò ñåáÿ êàê ñòîðîííèê ïåðåìåí è ïðîãðåññà. Äàçåòà æèâåò è ðàçâèâàåòñÿ âìåñòå ñ ðåãèîíîì, è ìû ÷ðåçâû ðàäû, ÷òî óæå äåñÿòü ëåò íà ñòðàíèöàõ ñâîåãî èçäàíèÿ Âû çàáîòëèâî îñâåùàåòå íàñóùíûå äëÿ íàñëåäíèÿ âîïðîñû, ÿñíî âûðàæàåòå ìíåíèå è ñàìûì ðàçíûì òåìàì è âñåãäà äàåòå âîçìîæíîñòü âûñêàçàòüñÿ ñâîèì

Սյունյաց երկիր

Շնորհավոր տարեդարձդ

Սյունյաց երկիր

Շնորհավոր տարեդարձդ

÷èòàòåëÿì. Ì û ïðèçíàòåëüíû çà òî, ÷òî ãàçåòà "Ñþíäö Åðêèð" èíôîðìèðóåò íàñ î âàæíûõ ñîáûòèÿõ â ñòðàíå è ìèðå è òùàòåëüíî ïîäõîäèò è íóæäåðåñíûå è ïîëåçíûå êî ìåíòàðèè ïîùòûõ ýêñïåðòîâ. Âàøå èçäàíèå çàâîâàäèî áîëüøîé àâòîðèòåò è ïðèçíàíèå êàê ñðåäè íàñåëåíèÿ, òàê è ïðåäñòàâèòåëåé áèçíåñà è âîñóäàðñòâåííîé âëàñòè. Áèàãîäàðè ÷à òî, ÷òî Âû âñåãäà îáúåêòèâîí îñåãùàåòå äåÿòåëüíîñòü è íàøåãî ïàðëàìåíòà, ÷òî ïîçâîëÿåò ïîñòîÿííî ïîâûøàòü ïðîôåññèîíàëèçì ÷èíîâíèêîâ è ïîëèòèêîâ, ÷òî ïîìîãà

Գիտության ներկայացուցիչների շնորհավորանքը

ՏԱՍՆԱՄՅԱ ԼԻՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Հայոց լեզու եւ գրականություն» գիտամեթոդական ամսագրի գլխավոր խմբագիր

Վաղուց առիթ էի որոնում իմ գնահատող խոսքն ասելու «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությանը, լրագրողներին, աշխատակիցներին եւ, առաջին հերթին, հրաշալի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանին:

Պարբերականը, ինչն ունի հրատարակության ավելի հին պատմություն, «Սյունյաց երկիր» անունով նշում է իր գործունեության տասնամյակը: Իմ տպավորությամբ թերթի համար դա լիության տասնամյակ է: Բնականորեն ես չեմ կարողացել հետեւել թերթի բոլոր համարներին, բայց այն համարները, որոնց ծանոթ եմ, եւ հատկապես նյութի որոշակի ուղղվածություն ունեցող բացառիկ համարները, ինձ վրա թողել են շատ լուրջ տպավորություն: Բացառիկ համարներն ինձ վրա տպավորվել են իրենց ընդգրկումով, մշակվածությամբ, բազմակողմանիությամբ եւ հանրագիտարանային սպառիչ ամբողջականությամբ: Այստեղ ե՛ւ գրողներն են ու մատենագիրները, ե՛ւ պատմաբաններն ու գործիչները, ե՛ւ քաղաքներն ու ավանները, ե՛ւ տաճարներն ու շինությունները… Այս շարքում ես պիտի թվարկեմ բոլոր այն համարները, որոնք նվիրված են հայոց գրերի ստեղծման 1600-ամյակին, Գրիգոր Տաթեւացուն, Աբովյանին, Չարենցին, Բակունցին, Սահյանին, Մաթեւոսյանին, Գուսան Աշոտին, Նիկողայոս Ադոնցին, Մելիք Հայկազն Երկրորդին, Տաթեւի Պողոս-Պետրոս կաթողիկեին, Վահանավանքին, Սյունիքի մարզկենտրոն Կապանին եւ մյուս քաղաքներին ու ավաններին՝ Գորիսին, Ագարակին, Քաջարանին: Հրաշալի են եւ հարուստ նյութ են պարունակում համարները՝ նվիրված Սարդարապատի ճակատամարտին, բռնադատումների ալիքին, որ անցավ Սյունյաց մարզի վրայով, Սյունիքի նշանավոր կանանց, Երկրորդ համաշխարհայինին մասնակցած սյունեցիներին, Սյունիքի էներգետիկային, անկախության 15-րդ տարեդարձին, պղնձամոլիբդենային կոմբինատին: Գիտեմ, որ պատրաստվում են բացառիկ համարներ՝ նվիրված Բղենո Նորավանքին, Մեղրուն, Հովհան Որոտնեցուն, Համո Սահյանին: Ցանկալի կլինի այս շարքում ներգրավել մարզի ոչ միայն քաղաքներն ու ավանները, այլեւ բոլոր գյուղերը, կրկնում եմ՝ բոլոր գյուղերն իրենց պատմությամբ եւ ներկա վիճակով:

Թերթն այս ձեւով ես տեսնում եմ որպես Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմության» շարունակություն:

Ասեմ, որ ինքս մասնակցել եմ որոշ համարների ստեղծմանը: Այս առումով ինձ համար շատ աշխատատար էր հատկապես «Գրական Գորիս» ծավալուն հոդվածը, ինչի կապակցությամբ զգացի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանի աջակցությունը: Ավելացնեմ՝ «Գրական Գորիս» հոդվածը նախադեպ է՝ ստեղծելու «Գրական Լոռի», «Գրական Շիրակ», «Գրական Այրարատ» եւ համանման այլ ուսումնասիրություններ:

Իմ աշխատակցության բերումով շատ բարձր եմ գնահատում նաեւ Վահրամ Օրբելյանի բարեխղճությունը. անցկացրել ենք հարցազրույցներ, պատրաստել հոդվածներ:

Չմոռանանք, սակայն, որ ինչպես կյանքը, այնպես էլ թերթը միայն տոնական օրերից ու համարներից չէ, որ կազմված է: Կան նաեւ առօրյա, սովորական օրեր եւ համարներ: Ահա այդտեղ է, որ ակնհայտ է դառնում թերթի դիրքորոշումը: Թերթը լուսաբանում է մարզն ամբողջությամբ: Սկզբունք է՝ լինել տեղում եւ ոչ թե երեւանյան որոշ թերթերի լրագրողների նման հարցազրույց անցկացնել հեռախոսով եւ, առանց վերջնաստուգման, տպագրել, կամ գրել ոչ թե սեփական աչքով տեսած-ստուգածը, այլ… լսածը: Ահա դա է պատճառը, որ «Սյունյաց երկիր» թերթի լրագրողները վազում են փաստի հետեւից, զրուցում ականատեսների հետ: Փաստը, նախեւառաջ փաստը, ինչից հետո մեկնաբանությունները կարող են լինել նաեւ ենթակայական: Իսկ փաստը միշտ առարկայական է: Այդ դիրքորոշմամբ թերթը երկու խմբագրականով անդրադարձավ նաեւ 2013թ. հունիսի մեկի գորիսյան իրադարձություններին:

Աչքիս առաջ է, թե ինչպես խորհրդային նախկին ժամանակներում տեղերում առաջինը կարդում էին շրջանային թերթը: Ստանում էին միութենական, հանրապետական նշանակություն ունեցող պարբերականներ, բայց առաջինը կարդում էին հատկապես շրջանային թերթը եւ կարդում էին ծայրից ծայր՝ բնաբանից (հանկարծ սխալ չլինի) մինչեւ խմբագիր (հանկարծ փոխած չլինեն), որովհետեւ իրենցն էր. ճանաչում էին ե՛ւ գրողին, ե՛ւ ակնարկների հերոսներին, գիտեին ճիշտն ու սխալը ներսից: Եւ հիմա ստուգում էին, թե իրենց իմացած ճիշտը որքանով է համապատասխանում թերթի ներկայացրած ճշտին կամ սխալին:

Ահա այսօր այդ դերն են ստանձնել մարզային թերթերը: Հայաստանի անկախացմանը հաջորդած վարչատարածքային նոր բաժանումից հետո (ինչը չեմ կարծում թե ճիշտ էր, որովհետեւ սկսեցին քայքայվել նախկին շրջկենտրոնները, դժվարացավ բնակչության սպասարկումը, թուլացավ անմիջական կապը, զարգացման մասին չեմ խոսում, որովհետեւ ընդհանուր հետընթաց է), արդեն իսկ մարզային թերթի ուղին դժվարությունների հանդիպեց եւ որոշ տեղերում այսօր էլ դեռեւս չի շտկվել:

Այս տեսակետից «Սյունյաց երկիր»-ն առաջնակարգ դիրքում է: «Սյունիք»-ը (1996) նախ դարձավ «Սյունյաց աշխարհ» (2000), հետո արդեն Մովսես Խորենացու հուշումով՝ «Սյունյաց երկիր» (2003): Կիսամսյա, տասնօրյա հաջորդականությունը հասել է շաբաթաթերթի հերթականության եւ իր բաժանորդների դռներն է թակում որպես սպասված հյուր:

Իմ գրադարանում եւս «Սյունյաց երկիր» թերթի բացառիկ համարները բացառիկ դիրքում են:

Սրտանց ասում եմ շնորհավո՛ր եւ մաղթում առաջիկա փաստախոսություն՝ ի նպաստ ճշմարիտ խոսքի եւ դրանով միայն՝ մեր հայրենիքի կայացման, շենացման ու բարգավաճման:

Շնորհավո՛ր տասնամյա լիությունդ, «Սյունյա՛ց երկիր»:

ԹԵՐԹՆ ԱՊՐՈՒՄ Է ԵՐԿՐԻ ՀՈԳՍԵՐՈՎ

ԿԻՄ ԱՂԱԲԵԿՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հոբելյարը միշտ էլ հետադարձ հայացք է նետում անցած ճանապարհին. ինչի՞ է հասել, ի՞նչ նվաճումներ ունի եւ ի՞նչ բացթողումներ, ընթերցող հասարակությունը գո՞հ է, թե՞ դժգոհ: Կարծում եմ, որ «Սյունյաց երկիր» թերթը շատ կարեւոր գործ է կատարում անցած դարձդարձիկ տարիներին: Այն մշտապես եղել է նոր կազմավորվող համակարգի առաջին դիրքերում՝ դրսեւորելով խորապես քննադատական մոտեցումներ:

Այդ թերթը մեր անցած դժվարին տարիների տարեգրությունն է:

Խոստովանում եմ, որ հանգամանքների բերումով միշտ չէ, որ կարդացել եմ «Սյունյաց երկիր» թերթը, բայց կարդացածս օրինակներն ինձ վրա մշտապես թողել են ներքին հպարտությունս շոյող ծանրակշիռ ու մնայուն տպավորություն, ինքնաբավ մի խորունկ զգացում՝ համարձակ ու արդարամիտ հնչողությամբ, որ պարտավորեցնում են գրելու այս խոսքը:

«Սյունյաց երկիր» թերթն ինձ համար մի ինքնատիպ հասարակական լսարան է, որ ունի իր անտրոհելի եւ անզիջում նպատակներն ու դրանք իրականացնելու համառ սկզբունքայնությունը:

Այն հայրենակերտումի դպրոց է, ընթերցողներին ազնվությամբ եւ ճշմարիտ հայրենասիրությամբ լիցքավորելու անփոխարինելի միջոց, ժողովրդի հետ երկխոսելու գործընթաց: Թերթն ապրում է երկրի հոգսերով:

Կարդացածս բոլոր համարներում էլ զգացվում են մեր հայրենի եզերքի գեղեցկությունը, հանդ ու հողի քաղցրությունը, հոգսաշատ ապրելակերպը, թախիծն ու տխրությունը եւ մերօրյա խնդիրների նկատմամբ դրսեւորած ակտիվ վերաբերմունքը:

Այս ամենի կողքին՝ թերթը պարբերաբար անդրադառնում է մեր մեծ նախնիների թողած վաստակին, նրանց հայրենանվեր գործունեությանը, նորովի շեշտադրումներով համադրում անցյալն ու ներկան, կարեւորում մարդ եւ բնաշխարհ կապի հավերժական ընթացքի աստվածային խորհուրդը:

Այդ խորհուրդը հուշում է , որ մարդու երջանկությունը ծաղկում, վերաճում է ինքնաբավ բավարարվածության՝ միայն ու միայն հայրենի հողի վրա:

Դժբախտ է այն մարդը, ով վաճառքի է հանում հայրական տունը, օտար ափերում, օտար երկնքի տակ փնտրում իր երջանկությունը՝ արդյունքում թե՛ իրեն եւ թե՛ իր ժառանգներին մատնում թշվառության, դառնում անտուն ու անհայրենիք խլյակ:

Հայրենիքից, հայրենի եզերքից հեռացող մարդն իրեն դատապարտում է հավիտենական որբության, բայց բնաշխարհն էլ որբանում է, երբ կորցնում է մարդուն: Ասել է թե հայրենիքից հեռանալ կրկնակի ողբերգություն է. որբանում է մարդը, որբանում է բնաշխարհը: Սա տագնապ չէ, այլ ռեալ իրականություն:

Թերթն իր էջերում զգալի հնչեղությամբ իմաստավորում ու ամրակայում է մարդ եւ բնաշխարհ կապի կարեւորությունը, որի համար էլ շնորհակալությունս եմ հայտնում՝ թերթը լույս աշխարհ բերող կոլեկտիվին եւ նրա անխոնջ ու շրջահայաց խմբագիր Սամվել Ալեքսանյանին, եւ նրանց շնորհավորում այս հրաշալի հոբելյանի առիթով: Թո՛ղ հարատեւի նրանց սկսած երկխոսությունն ընթերցողի հետ:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐԸ»՝ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹ

ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ես անչափ ուրախ եմ, որ հայաստանյան լրատվական դաշտում ունենք «Սյունյաց երկիր» պարբերականը: Առավել ուրախ եմ, որ գլխավոր խմբագիրը պայծառ, լուսավոր մարդ է. դժվարությունները հաղթահարելով, պայքարելով, համառությամբ, կռվով, բայց իր նպատակին հասնում է: Նա մինչեւ հիմա կարող էր առնվազն գիտությունների թեկնածու լինել: Վահանավանքին նվիրված հատուկ համարի խմբագրականը, որի հեղինակն ինքն է, գիտական լուրջ աշխատանք է: Հիմա էլ ուշ չէ, եւ ես հորդորում եմ իմ նախկին ուսանողին՝ զբաղվել գիտությամբ, թեեւ լրագրողական աշխատանքով ծանրաբեռնված է: Ես մեծ հաճույքով կստանձնեմ նրա գիտական ղեկավարի դերը: Առհասարակ այդ թերթը գիտական ու ճանաչողական մեծ արժեք ունի: Նախկինում «Սյունյաց աշխարհ» էր, հիմա՝ «Սյունյաց երկիր»: Մեզ մոտ՝ ակադեմիայի ինստիտուտում, բաժնից բաժին են տանում «Սյունյաց երկիրը» եւ ընթերցում: Ես կարող եմ ասել, որ այն լրատվական ու մշակութային երեւույթ է ոչ միայն Սյունյաց, այլեւ ամբողջ հայկական աշխարհում: Կցանկանայի, որ խմբագրակազմը շարունակեր աշխատել ու ստեղծագործել նույն ոգով: Այդ լրագրի գործունեությունը շատ կարեւոր է բոլորիս համար:

Սրտանց շնորհավորում եմ «Սյունյաց երկիր» լրագրին՝ հոբելյանի կապակցությամբ:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐԸ» ՀԻՇԵՑՆՈՒՄ Է ՄԵՐ «ԲԱՋՄԱՎԷՊԸ»

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու

Պատմության քառուղիներում յուրաքանչյուր ժողովուրդ տանում է հատկապես այն, ինչն իրենն է, եւ միայն իրենը, որտեղ էլ երեւակում է նրա ազգային դիմագիծը. եգիպտացիների համար նրանց բուրգերն են (առանց ժողովրդի), շատ երկրների համար ինքնատիպ ճարտարապետությունը (ուժեղ պետականությամբ կամ՝ առանց դրա). մեզ համար՝ մեր եկեղեցիներն են (ճարտարապետություն չեմ ասում, որովհետեւ վերջինիս մեջ շատ ու շատ այլ բաներ էլ կան, որ մեր քաղաքակրթությունը մեզ ժառանգություն չի թողել), մեր ձեռագրերը, գիր-գրականությունը, աշխարհաբարի շրջանից նաեւ՝ թերթերն, ամսագրերը եւ տարեգրքերը:

Սեղանիս դրված է 1512 թվականին հրատարակված Ուրբաթագրքի վերահրատարակությունը՝ գրեթե

նույնությամբ: Քիչ ժողովուրդներ կան, որ կարող են նմանատիպ պատիվ բերող փաստ արձանագրել: Մեր ավերակված պատմության եւ նրա լուսավոր բեկորիկների կողքին լուռ վկայություններ են տալիս նաեւ «Ազդարարը», «Բազմավէպը», «Ազգասէրը», «Մեղուն», «Ճռաքաղը», «Հյուսիսափայլը», «Մշակը», «Աղբյուրը», «Մուրճը» եւ այլ թերթեր ու պարբերականներ:

«Տարեգիր», «Հանդիսարան ազգային», «Հանրապատում», «Լրագիր քաղաքական», «Օրագիր բանասիրական», «Ամսագիր ազգային», «Պատկերազարդ մանկական ամսագիր» եւ բազմաթիվ այլ անուններով աշխարհի գրեթե բոլոր ծայրերում ազգային, կրոնական, քաղաքական, մշակութային, գրական, տնտեսագիտական եւ բազմաթիվ այլ հարցերի են անդրադարձել 1794 թվականից ի վեր հրատարակվող շուրջ 4000 հայկական թերթ ու պարբերական:

Ի սրտե շնորհավորում եմ «Սյունյաց երկիր» հանդեսին (չնայած նա իրեն անվանում է տասնօրյա թերթ, սակայն բովանդակությամբ եւ ըստ էության հիշեցնում է մեր «Բազմավէպը») որպես վերոնշյալ պարբերականների արժանավոր ժառանգորդի եւ մշակութային լավագույն ավանդույթների շարունակողի:

Հուսով եմ, որ մի օր էլ նույն հպարտությամբ մենք կշնորհավորենք մեր ժողովրդին՝ ուժեղ, առինքնող, սեփական դիմագիծ ունեցող պետականության առիթով:

ՊԱՀԱՆՋՎԱԾ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑ ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՅՈՒՐԻ ՍԱՖԱՐՅԱՆ

Գորիսի պետական համալսարանի ռեկտոր, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«Սյունյաց երկիր» թերթը ծնվել ու կայացել է մեր աչքի առաջ: Եվ իր սկզբունքայնությամբ ու օբյեկտիվությամբ աճել ու տեղ է գրավել հանրապետության ամենահետաքրքիր թերթերի ու ամսագրերի շարքում:

Շատ ուրախ եմ թերթի հաջողություններով, մեր հասարակության մեջ ունեցած հեղինակությամբ: Առավել ուրախ եմ, որ թերթի խմբագիրը սկզբունքային, համարձակ լրագրող Սամվել Ալեքսանյանն է: Նրան ճանաչում եմ դպրոցական տարիներից, երբ Հարժիսի դպրոցից եկել ու 10-րդ դասարանում սովորում էր Գորիսի Ակսել Բակունցի անվան միջնակարգում, այնուհետեւ կոմերիտմիության շրջկոմի քարտուղարն էր, Գորիսի մշակույթի բաժնի վարիչը, «Զանգեզուր» թերթի խմբագիրը: Նրա մասնագիտական ու քաղաքացիական որակներն էին հիմնական երաշխիքներից մեկը, որի շնորհիվ կայացավ «Սյունյաց երկիրը»:

«Սյունյաց երկիրն» այսօր լուրջ գործոն է մարզի հասարակական-քաղաքական, հոգեւոր-մշակութային կյանքում, ինչը ողջունելի է:

«Սյունյաց երկրի» հետագա գործունեությունն անհրաժեշտ է Սյունիքի մարզին:

Ե՛վ իմ, ե՛ւ Գորիսի պետհամալսարանի ուսանողության ու պրոֆեսորադասախոսական անձնակազմի շնորհավորանքն եմ հղում թերթի կոլեկտիվին, մաղթում հետագա խրոխտ ընթացք:

ԱՆԵՐԵՐ ԸՆԹԱՑՔ

ՇՉՈՐՍ ԴԱՎԹՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

«Սյունյաց երկիրը» բոլորեց իր տասնամյակը՝ անցնելով դժվարին, ոչ սովորական, ինչ-որ տեղ անհաղթահարելի թվացող ճանապարհ: Իհարկե, նա կարող էր այլ ուղիով ընթանալ, ինչպես պատահում է զանգվածային լրատվության բազմաթիվ միջոցների հետ, այսինքն՝ իշխանասեր լինել, ծառայել զանազան չինովիկների, օլիգարխների, ուժերի ու խավերի, փնտրել եղած-չեղած արկածախնդրություններ կամ էլ ոչինչ չանել, տեսակ եւ գույն չունենալ, ուղղակի լույս տեսնել՝ տպագրված լինելու համար:

Թերթն ինքնահաստատվելու համար հենց սկզբից պիտի պատերազմեր մարտնչող բյուրոկրատիայի, սահմռկեցուցիչ անտարբերության, ամեն բնագավառում բարգավաճող կոռուպցիայի, համատարած ամենավաճառության, ինչպես նաեւ ժամանակի ծնունդ հանդիսացող բազմաթիվ չարորակ նորագոյացումների դեմ:

Ամենակարեւոր երեւույթներից մեկը, որ նկատելի է թերթի համարներն ուսումնասիրելիս, գործին ստեղծագործաբար մոտենալու լրագրողական վճռակամությունն է : Հոդված կամ ակնարկ գրելն ինքնին ոչինչ չի ներկայացնում, եթե գրածը չի բարձրանում ստեղծագործության մակարդակի: Այս խնդիրը թերթը կարողանում է վճռել՝ հրատարակելով նաեւ թեմատիկ համարներ, որոնք ունեն ոչ միայն ճանաչողական հսկայական նշանակություն, այլ նաեւ գիտական արժեք: Ուղղակի զարմանալի են թվում այդ համարների ստեղծման համար ջանքերն ու ցուցաբերած բարեխղճությունը:

Իսկական, ճշմարիտ եւ փնտրված կարող է լինել այն թերթը, որ գտնվում է երկու ջրաղացքարի արանքում, այսինքն՝ հասարակական կարծիքի եւ մամուլի վրա ճնշման միտումներ ունեցողների միջեւ: Այդ պայմաններում հնարավոր չէ չհիշել հանրահայտ ճշմարտությունը, թե ստեղծագործողը մշտապես զոհի դերում է:

«Սյունյաց երկրի» տասնամյակի առիթով ցանկություններ եւ բարեմաղթանքներ շատ կարող են լինել, սակայն ամենակարեւորն այն է, որ թերթը պահպանի իր ինքնատիպությունն ու ազգային նկարագիրը, որովհետեւ հասարակական գիտակցության ձեւերը կարող են համամարդկային կամ անհայրենիք լինել, սակայն այդ գիտակցության կրողները՝ արվեստագետները, գրողները, ինչպես նաեւ լրագրողները պարտավոր են հայրենիք ունենալ, սիրել այն եւ աշխատել հանուն նրա բարգավաճման ու հարատեւման:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿՐԻ» ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿԸ

ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

2003թ. հայ մամուլի անդաստան մտավ մի նոր պարբերական՝ «Սյունյաց երկիր» երկշաբաթաթերթը (հետագայում՝ տասնօրյա), որի հիմնադրմամբ նոր փուլ բացվեց Սյունիքի պարբերական մամուլի եւ հասարակական մտքի պատմության մեջ: Ստեղծվեց մի պարբերական, որն ամբողջովին հավատագրված է պաշտպանելու եւ ապահովելու հայ լրագրության ու հասարակական կյանքի առաջընթացը: Անգնահատելի է «Սյունյաց երկրի» դերն ու նշանակությունը Հայաստանի Հանրապետության, մասնավորապես Սյունիքի մարզի հասարակական-քաղաքական եւ կրթամշակութային կյանքում: Թերթն իր հրապարակման օրվանից ոչ միայն ժառանգեց Զանգեզուրի գավառակենտրոն Գորիս քաղաքում 1909-1910թթ. լույս տեսած «Գավառ» շաբաթաթերթի (հրատարակիչ-խմբագիր՝ Սիմեոն Տեր-Մինասյան) ավանդները, այլեւ մեծապես զարգացրեց դրանք՝ վերհանելով այն հիմնախնդիրները, որոնք առաջադրում է մարզի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, գրական եւ կրթամշակութային կյանքը: Նման խնդիրներ լուծելու եւ բազում դժվարություններ հաղթահարելու համար անհրաժեշտ էր անկոտրում կամք, սեփական գործի արդարացիության հստակ գիտակցություն ունեցող մարդ: Այդպիսի եզակի անհատականություններից է Սյունիքի մարզի բազմաբնույթ հոգսերով ապրող, հայ լրագրության անխոնջ մշակ, «Սյունյաց երկիր» թերթի հիմնադիր-խմբագիր Սամվել Ալեքսանյանը, ով իր ժողովրդին ծառայելու նպատակադիր գաղափարով, մամուլի գործերի քաջատեղյակությամբ կարճ ժամանակում թերթը դարձրեց մարզային կյանքն իր բոլոր կողմերով արտահայտող առաջատար լրագրերից մեկը՝ իր շուրջը համախմբելով բոլոր նախանձախնդիր ու կարող ուժերին:

«Սյունյաց երկիրը» հայ մամուլի պատմության մեջ այն եզակի թերթերից է, որ աշխատանքային մեծապես ճշգրտված ներքին քաղաքականությամբ երբեք չնահանջեց իր որդեգրած ուղուց: Հրապարակ մտնելու առաջին օրերից նա հետեւողականորեն եւ համակողմանիորեն վեր է հանում մարզում կուտակված բազմաթիվ ու բազմապիսի խնդիրները, շարունակում լուսաբանել հասարակական-քաղաքական ու կրթամշակութային կյանքը եւ այլն: Թերթն օրինակելի է ե՛ւ կառուցվածքի, ե՛ւ բովանդակության առումով: Յուրաքանչյուր համար ունի Աստվածաշնչից կամ նշանավոր գործիչների երկերից քաղված դիպուկ բնաբան-ենթատիտղոսներ, որոնք էլ ավելի բովանդակալից են դարձնում թերթը:

Խմբագրությունն առաջին իսկ օրվանից մեծ տեղ է նվիրել հասարակական-քաղաքական հարցերի լուսաբանմանը: Հարկ է նշել, որ թերթի հրապարակախոսներից (վերլուծական մտքի տաղանդով) աչքի է ընկնում խմբագրապետ Ս.Ալեքսանյանը: Նրա հրապարակախոսության մեջ ծանրակշիռ տեղ են գրավում հանրապետության, մասնավորապես Սյունիքի մարզի հասարակական-քաղաքական անցուդարձին նվիրված հարցերը, քննարկվում են ժողովրդին հուզող առաջնահերթ խնդիրները: Եվ դա հասկանալի է: Ազգային կյանքի առաջընթացին նախանձախնդիր, լայն հարցադրումներով ու հրապարակախոսական սրությամբ գրված հոդվածները յուրատեսակ ծրագրեր են, որոնցում համարձակորեն վեր է հանվում հասարակական հնչեղություն ունեցող ճշմարտությունը եւ մատնանշվում իրավիճակը բարելավող միջոցների ուրույն ճանապարհը:

Մի կարեւոր հանգամանք եւս. մեր այսօրվա թերթերը, կարծեք, պատմաբաններին, բանասերներին, ապագա հետազոտողներին քիչ նյութ են տալիս կամ գրեթե չեն տալիս: Եթե XIX դարավերջի եւ XX դարասկզբի պատմությունը կարողանում ենք վեր հանել պարբերական մամուլի միջոցով՝ «Մշակ», «Մուրճ», «Նոր-Դար», «Կովկաս», «Արձագանք» եւ այլն, ապա այսօրվա թերթերից շատերը տասնամյակներ հետո սկզբնաղբյուրի նշանակություն գրեթե չեն ունենալու: «Սյունյաց երկիր» թերթն այս առումով, ըստ էության, բացառություն է: Անգնահատելի է թերթի դերն ու նշանակությունը Սյունյաց աշխարհի պատմության տարաբնույթ հարցերի լուսաբանման գործում, որն ունի ճանաչողական մեծ արժեք: Գլխավոր խմբագրի պատմաբան լինելու հանգամանքը պայմանավորում է թերթում հայագիտական հարցերի գերակշռությունը. առանձին համարներ՝ նվիրված Գորիս, Կապան, Քաջարան, Ագարակ քաղաքների, գյուղերի, ինչպես նաեւ սյունեցի նշանավոր տոհմերի պատմությանը, ըստ արժանվույն կգնահատեն սերունդները: 2003 թվականից ի վեր թերթի էջերում պատմագիտական հոդվածներ են հրապարակել եւ հարցազրույցներ տվել ճանաչված պատմաբաններ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը, պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանը, պ.գ.դ. Ամատունի Վիրաբյանը. պ.գ.դ. Օնիկ Խնկիկյանը, պ.գ.թ, պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանը, պ.գ.դ. Վահան Մելիքյանը եւ շատ ուրիշներ: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաեւ Ռոբերտ Էջանանցու, Գրիշա Սմբատյանի, Սերգեյ (Ռուբեն) Հախվերդյանի եւ այլոց թղթակցությունները՝ նվիրված Սյունիքի պատմության տարաբնույթ հարցերի լուսաբանմանը: Թերթն առանձնահատուկ վերաբերմունք ունի նաեւ հայոց պատմության հերոսական էջերի լուսաբանման նկատմամբ: Այս դիրքորոշումն արտահայտվեց հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող 1918թ. մայիսյան հերոսամարտերին նվիրած համարում (2008թ., N 10-11): Այդտեղ առատ փաստերի հենքի վրա ներկայացվում է հատկապես սյունեցիների մասնակցությունը Սարդարապատի, Ղարաքիլիսայի (այժմ՝ Վանաձոր), Բաշ-Ապարանի, ինչպես նաեւ Բաքվի 1918թ. հերոսամարտերին:

Թերթի հիմնական խնդիրներից մեկը եղել եւ մնում է Արցախյան մերօրյա ազգային-ազատագրական պայքարի լուսաբանումը:

Այսպիսով՝ «Սյունյաց երկիրն» անցած ժամանակաշրջանում լույս տեսած մամուլի լավագույն ավանդույթների յուրատեսակ սինթեզումն է, որի հիմքի վրա մեզանում ստեղծվում է նոր տիպի լրագրություն:

Հարուստ է նաեւ թերթի գրականության եւ բանասիրության բաժինը: Գրական բաժնում տպագրվել են Ակսել Բակունցի արձակը, Համո Սահյանի պոեզիան, ինչպես նաեւ բ.գ.դ., պրոֆեսորներ Կիմ Աղաբեկյանի, Ազատ Եղիազարյանի, Դավիթ Գասպարյանի, Շչորս Դավթյանի, արձակագիր Արկադի Ծատուրյանի եւ այլոց գրականագիտական հոդվածները: Գրական բաժնին նոր որակ են հաղորդել բանաստեղծ Տիգրան Գրիգորյանի բանաստեղծությունները:

Թերթում ճանաչողական կարեւոր նշանակություն ունեն նաեւ հոգեւոր, գրական եւ հասարակական-քաղաքական գործիչներին (Գրիգոր Տաթեւացի, Խաչատուր Աբովյան, Նիկողայոս Ադոնց եւ այլք) նվիրած համարները:

Ի մի բերելով մեր խոսքը՝ կարելի է աներկբայորեն հաստատել, որ հիմնադրման 10-ամյակը բոլորած «Սյունյաց երկիր» թերթն իր արծարծած հարցերի լայն շառավղով անգնահատելի եւ կարեւոր ներդրում ունի Սյունիքի մարզի հասարակական մտքի ձեւավորման, տարաբնույթ հիմնախնդիրների բարձրացման ու լուծման գործում: Թերթն արդեն իսկ հայ մամուլի պատմության մեջ նվաճել է իր հաստատուն տեղը: Ձեռք բերած մեծ ժողովրդականության շնորհիվ ամրապնդվել է հասարակության հետ նրա ներդաշնակ կապը՝ հետագա սերունդների համար դառնալով կարեւոր սկզբնաղբյուր:

Պատվելի Սամվել Ալեքսանյան. շնորհավորում ենք Ձեզ, ինչպես նաեւ ողջ խմբագրակազմին՝ Ձեր երախայրիքի՝ «Սյունյաց երկրի» 10-ամյակի առթիվ եւ ցանկանում հետագա բեղուն գործունեություն:

Զարգացող հոբելյանի առիթով

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ. «Լինել մեր ժամանակի ճշմարիտ վավերագրողը. ահա «Սյունյաց երկրի» գլխավոր առաքելությունը»

Սկիզբը՝ էջ 1

ների անունները՝ «Սյունիք», «Սյունյաց աշխարհ», չէինք կարող օգտագործել, քանի որ դրանց լուծարումը դեռեւս ավարտին չէր հասցվել: Եվ թերթը կոչեցինք «Սյունյաց երկիր»: Դա Մովսես Խորենացու ձեւակերպումն էր, որ հիշեցրեց ու առաջարկեց Գրիգոր Թադեւոսյանը (ներկայումս մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալն է):

Թերթը, փաստորեն, առաքելություն ուներ լինելու մարզային նախորդ երկու պարբերականի օրգանական շարունակությունը, մանավանդ որ խմբագրակազմն էլ համալրվեց դրանց աշխատակիցներով:

...1996-ի տարեսկզբին ձեւավորվում էին մարզպետարանն ու մարզային կառույցները: Մարզային թերթ ասվածն էլ վարչատարածքային նոր իրողության ծնունդ էր: Այդ ժամանակ էլ հիմնադրվեց «Սյունիք» թերթը (1996թ. մայիս – 1999թ. դեկտեմբեր, թողարկվել է 160 համար, խմբագիրն էր Գագիկ Դավթյանը): Ավելի ուշ մարզպետարանը զրկվեց լրատվամիջոցի հիմնադիր լինելու իրավունքից: Եվ հիմնադրվեց «Սյունյաց աշխարհը» (2000թ. սեպտեմբեր - 2003թ. սեպտեմբեր), հիմնադիրը «Կապանի մեքենաշինական գործարան» ԲԲԸ-ն էր (տնօրեն՝ Համլետ Ալեքսանյան), թողարկվեց 85 համար, որից 22-ը խմբագրեց Նարա Հովհաննիսյանը (Կապան էր հրավիրվել Սիսիանից), 6-ը՝ Վահրամ Օրբելյանը, 1-ը՝ Արմեն Հակոբյանը, 56-ը՝ Սամվել Ալեքսանյանը: Արմեն Հակոբյանը, ինչպես ասացինք, ընդամենը մեկ համար խմբագրեց. 2002թ. փետրվարի 5-ի ողբերգական պատահարի հետեւանքով, 43 տարեկանում, նրա կյանքի թելը կտրվեց: 2003-ի ամռանն արդեն ակնհայտ դարձավ, որ մեքենաշինական գործարանն այլեւս ի վիճակի չէ հովանավորել թերթի գործունեությունը: Եվ ահա ծնունդ առավ «Սյունյաց երկիրը»:

Անդրանիկ համարում պետք է հռչակեինք թերթի առաքելությունը (խմբագրականի, առաջնորդողի կամ ողջերթի խոսքի տեսքով): Տարբեր կարծիքներ կային, քանի որ առաջին անգամ էր Սյունիքում տարածքային իշխանությունից անկախ մարզային թերթ ծնվում: Ի վերջո, կանգ առանք տարբերակի վրա, որի վերնագիրն էր՝ «Մերն է այս երկիրը, եւ մենք ենք նրա տերը»: Դրանով հայտարարում էինք, որ երկրամասի տերն ու պատասխանատուն, նախեւառաջ, այստեղ ապրողներն ու արարողներն են, որ Սյունիքի զարգացման գլխավոր երաշխիքներից մեկը բացախոսությունն է, որ իշխանավորները կգան ու կգնան (հաճախ՝ դրական հետագիծ չթողնելով անգամ), իսկ ճշմարիտ խոսքը կմնա ու կփոխանցվի գալիք սերունդներին: Մարդու անցողիկության եւ խոսքի հավերժության անբեկանելի ճշմարտությունն է, կարծեք, հավաստում միջնադարյան անհայտ գրիչը. «Ես մեռանիմ դառնամ ի հող, գիրս մնա հիշատակող»:

Թերթի ծննդյան առթիվ շատ շնորհավորանքներ ստացանք այդ օրերին. մի մասը զետեղված է առաջին համարում: Մեզ շնորհավորեց նաեւ հանրապետության վարչապետ, բարեհիշատակ Անդրանիկ Մարգարյանը:

– Բայց հռչակված սկզբունքը՝ «Մերն է այս երկիրը, եւ մենք ենք նրա տերը», 2004թ. սեպտեմբերի 28-ին Ձեզ կանգնեցրեց նոր իրողության առջեւ: Ձեզ այլեւս չթույլատրվեց համատեղել խմբագրի ու մարզպետի մամուլի քարտուղարի պաշտոնները, թերթի խմբագրությունը դուրս հանվեց մարզպետարանի շենքից... Եվ այդ օրվանից սկսեց շրջանառվել հայտնի գուշակությունը՝ «Շուտով փակվում է «Սյունյաց երկիրը»»: Եվ այդ «գուշակները» մինչեւ օրս էլ կանխատեսումներ են անում: Իհարկե, հետագայում մարզպետարան-թերթ հակամարտությունը մեծ մասամբ վերացավ, բայց առաջ եկավ մեկ այլ երեւույթ՝ Քաջարանի կոմբինատ-թերթ անհանդուրժողականությունը: Մինչ այդ էլ տեղի ունեցավ հարձակում թերթի խմբագրության վրա, դրանից ամիսներ անց հրկիզվեց խմբագրության ավտոմեքենան, Կապանում հետապնդումներ սկսվեցին այն մարդկանց հանդեպ, ովքեր փորձեցին խմբագրության համար վարձակալությամբ տարածք տրամադրել եւ այլն:

– Անկեղծ ասած, չենք ուզում անդրադառնալ մեր տարեգրության այդ էջերին: Տարիների հեռվից միայն հետեւյալը կարող ենք ասել՝ ինչ-որ տեղ այդ հակամարտությունը սպասելի էր: Մարզպետի մամուլի քարտուղար չէր կարող լինել մի անձնավորություն, ով միեւնույն ժամանակ քննադատում էր մարզպետարանի գործունեությունը, մարզպետական ինստիտուտը համարում մարզի զարգացմանը խոչընդոտող գործոն եւ այդ մասին բացեիբաց հայտարարում իր իսկ խմբագրած թերթում: Վերջին հաշվով դա դիմադրություն էր կանոնին, եւ Սամվել Ալեքսանյան խմբագիրը նման մտածելակերպով ու գործելակերպով չէր կարող լինել մարզպետի թիմում: Մեզ առաջարկվեց թերթը թողնել եւ շարունակել մնալ մամուլի քարտուղար, բայց նախապատվությունը թերթին տվեցինք: Արդյունքում սկսվեց հակամարտությունը՝ աներեւակայելի ծայրահեղ դրսեւորումներով: Սակայն ե՛ւ Սուրեն Խաչատրյանը, ե՛ւ մենք շուտով անկարելի համարեցինք նման հակամարտությունն ու կարեւորեցինք մարզպետարան-թերթ համագործակցությունը մարզի շահերին առնչվող առանցքային հարցերում: Այդ համագործակցության արդյունքում, ի դեպ, ծնվեցին թերթի մի քանի համարներ, որոնք, հիրավի, բացառիկ են: Առհասարակ Սուրեն Խաչատրյանի գործունեության այդ փուլում աննախադեպ մեծ ուշադրություն դարձվեց հոգեւոր-մշակութային ոլորտին, ինչը հավաստող բազմաթիվ փաստեր կան:

– Հիմա էլ, ինչպես տեսնում եմ, թերթի եւ նորանշանակ մարզպետի հարաբերությունները, մեղմ ասած, բարեկամական ու գործընկերային չեն, ինչը չի կարելի չնկատել:

– Ինչպես նախորդ մարզպետի ժամանակ, այնպես էլ հիմա համոզված ենք՝ մարզային թերթն ու մարզպետը մարզի ընդհանրական շահերի շուրջ պետք է համագործակցեն՝ մարզպետի ու խմբագրի՝ միմյանց հանդեպ ունեցած համակրանքից ու հակակրանքից անկախ: «Սյունիքում՝ նոր ստատուս քվո» հոդվածում, որ հրապարակեցինք մարզպետափոխությունից անմիջապես հետո, նույնպես արտացոլվեց այդ միտքը: Ինչպես նախկինում, այնպես էլ հիմա առաջինը մենք կողջունենք, եթե մարզպետն աշխատի ըստ պատշաճի, եթե մարզպետը կանգնի մարզի շահերի պաշտպանության դիրքերում եւ ձեռնամուխ լինի առկա հիմնախնդիրների լուծմանը: Միաժամանակ, սակայն, մնում ենք համոզմունքին, որ մարզպետական ինստիտուտը, առավել եւս այս տեսքով, մեծագույն արգելք է Սյունիքի զարգացման ճանապարհին: Մյուս կողմից՝ մարզպետարանն էլ հիմա այն մարզպետարանը չէ: Փետրվարի 18-ի ընտրությունից ակնկալվող սպասելիքները չարդարացան, եւ հետագայում էլ ստացվեց, որ տարածքային կառավարման այդ ինստիտուտն այլեւս քաղաքական գործոն չէ Սյունիքում: Կա մեկ այլ իրողություն եւս. նոր մարզպետի օրերում պալատական ներքինիների եւ եղծված նաժիշտների դերն է մեծացել: Շատ-շատ որոշումներ ու քայլեր հենց նրանք են պարտադրում:

– Եվ այդ իրավիճակում ու նման մտածելակերպի պարագայում շատերը «Սյունյաց երկիրը» համարում են ընդդիմադիր թերթ, Ձեզ՝ ընդդիմադիր լրագրող:

– Ընդդիմադիր լինել-չլինելու չափանիշները մեզանում վաղուց են հստակեցվել: Ընդդիմադիրը նա չէ, ով օրվա իշխանավորներից մի քանիսի կամ ինչ-որ անհայրենիք օլիգարխի գործելակերպ չի ընդունում: Հայոց պետականության դեմ ընդդիմադիր է նա, ով խրված է կոռուպցիայի մեջ, ով ասպատակում է հայրենի սրբազան հողը, ով վարկաբեկում է մեր պետական կարգը... Այնպես որ հնարավոր է մարդ լինի մարզպետ, նախարար, քաղաքապետ, գյուղապետ, օլիգարխ, բայց ընդդիմադիր լինի մեր պետականությանն ու հայոց արժեհամակարգին: Ուրեմն եւ ինքներդ որոշեք, թե ով է մեզանում ընդդիմադիրը:

– Բավականին շատ շնորհավորանքներ եք ստացել թերթի հոբելյանի առթիվ, դրանց մի մասը, որքանով հասկացա, զետեղում եք հոբելյանական համարում: Գործող մարզպետը, մինչդեռ, շնորհավորական խոսք չասաց...

– Հիմա դա անկարեւոր, գրեթե նշանակություն չունեցող հանգամանք է Սյունիքում, եւ պետք չէ արտառոցություն համարել, մանավանդ որ ինքը չի որոշում իր անելիքը. չեն թողել, ինքն էլ չի շնորհավորել: Արտառոցն այն է, որ մարզպետի աթոռը զբաղեցնող անձնավորությունը պաշտոնավարման հարյուր օրվա ընթացքում այդպես էլ անհաղորդ մնաց մարզի հիմնախնդիրներին եւ բառ անգամ չասաց դրանցից որեւէ մեկի մասին ու իր դիրքորոշումը չարտահայտեց, օրինակ, Մեղրիում եւ Կապանում այդ ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների առնչությամբ: Փոխարենը ժամանակ գտավ ու գլխիկոր լսեց Պարսկաստանից վարձակալությամբ Սյունիք ներմուծված մոլլայի նամազն առ Ալլահ ու ղուրանյան ընթերցումը, քանի որ մոլլայի կապանյան քարոզը լրացուցիչ եկամուտ է խոստանում իր ընտանիքին:

– «Սյունյաց երկրի» առանձնահատկություններից (արժանիքներից) մեկը թեմատիկ (բացառիկ) համարներ թողարկելու կարողությունն է: Ընդ որում՝ մի քանի համար բարձր գնահատականի է արժանացել գիտական շրջանակներում: Այդուհանդերձ, դա դժվար, շատ աշխատատար ու պատասխանատու ուղղություն է, որ որդեգրել եք: Ձեր ինչի՞ն էր պետք նման բեռան տակ ընկնելը, մանավանդ որ հաջողում եք թերթի վարկանիշն ապահովել հերթական համարների հրատարակմամբ:

– Նախ՝ դա պայմանավորված է ե՛ւ խմբագրի, ե՛ւ խմբագրակազմի մյուս անդամների նախասիրություններով: Երկրորդ՝ «Սյունյաց երկիրն» ի սկզբանե խնդիր ուներ լինել ոչ միայն մեր օրերի ճշմարիտ վավերագրողը, այլեւ մեր երկրամասը (անցյալն ու ներկան, պատմական դեմքերն ու իրադարձությունները, բնակավայրերը, սրբավայրերը) ճանաչելի դարձնելը: Իսկ Սյունիքը ճանաչելի դարձնելու համար սովորական համարների հնարավորություններն ու չափանիշները չեն կարող բավարար լինել: Թերթի՝ հոբելյանին նվիրված համարում ներկայացնում ենք «Սյունյաց երկրի» այն թողարկումների ցանկը, որոնք կարելի է, առանց վերապահման, բացառիկ անվանել: Չենք ուզում դրանցից որեւէ մեկն առանձնացնել, յուրաքանչյուրն ուշագրավ է յուրովի:

– Հետաքրքիր է, ի՞նչ ծրագրեր ունեք այդ ուղղությամբ:

– Երկու-երեք տարի է, ինչ պատրաստում ենք համար՝ նվիրված Մեղրուն: Բավականաչափ նյութեր ենք հավաքել, լուսանկարչական աշխատանք կատարել, արխիվներն ենք պրպտել: Դա, իսկապես, աննախադեպ համար է լինելու, մանավանդ որ Մեղրու վերաբերյալ, ի տարբերություն Գորիսի, Կապանի եւ Սիսիանի տարածաշրջանների, նախկինում շատ թե քիչ ամբողջական նյութեր չեն հավաքվել ու միաժամանակ հրապարակվել:

Գրեթե պատրաստ են Բղենո Նորավանքին նվիրված համարի նյութերը: Այսօր արդեն կարող ենք ասել՝ սյունիքյան հոգեւոր կենտրոններից որեւէ մեկը (բացի Տաթեւից) համաշխարհային համբավ ունեցող գիտնականների կողմից այդքան հանգամանալից ու բազմակողմանի չի քննարկվել, որքան Բղենո Նորավանքը:

Երկու տարի հետո լրանում է Սյունյաց աշխարհի երեք սրբերից առաջինի՝ Հովհան Որոտնեցու 700-ամյակը, որին նվիրված համարի հրատարակմանը նույնպես պատրաստվում ենք:

2014-ին լրանում է Սյունյաց աշխարհի մեծերից մեկի՝ Համո Սահյանի 100-ամյակը: Ուզում ենք հատուկ համար թողարկել նաեւ այդ առիթով: 2004-ին հրատարակածը, թվում է, լիարժեք չէր ստացվել:

Մենք, ինչպես ազդարարել ենք 2011-ի տարեվերջին, թերթային աննախադեպ մի համար էլ կնվիրենք Արցախյան ազատամարտին Սյունիքի մարզի ու սյունեցիների մասնակցությանը: Խոստացել էինք այդ համարը հրատարակել 2014-ի տարեսկզբին, բայց, կարծես, չենք հասցնում:

Անավարտ են մնացել Դավիթ Բեկի գլխավորած ազատագրական պատերազմի, մարզպան Վասակ Սյունեցուն նվիրված համարների նախապատրաստական աշխատանքները:

Որոշ գյուղական համայնքներից էլ ունենք հատուկ համարի պատվեր. այդ առաջարկությունները քննարկում ենք:

– «Սյունյաց երկիրը», կարող ենք ասել, ի սկզբանե իրեն դուրս է դրել սովորական լրատվամիջոցի համար ի վերուստ գծված շրջանակից: Ապացույցներից մեկը խմբագրության նախաձեռնությամբ ծնված բարձրարժեք 11 գեղանկարներն են:

– Թերթի հոբելյանական համարում կներկայացնենք այդ կտավների ցանկն ու մի մասի լուսանկարները, թեեւ դրանք մի անգամ արդեն ներկայացրել ենք: Գեղանկարները (բացառությամբ մեկի) ճանաչված արվեստագետ Ռոբերտ Կամոյանի ստեղծագործություններն են: Նրա հետ աշխատելը միշտ էլ պատիվ ենք համարել: Նրա՝ մեր պատվերով ստեղծած գործերից յուրաքանչյուրում տեսնում ենք հեղինակի վարպետությունը, գեղարվեստական բարձր ճաշակը, ձեւի ու բովանդակության ներդաշնակությունը, գույների տպավորիչ համադրումը: Պատմական թեմաներով ստեղծագործություններն էլ մեր ժողովրդի անցած ժամանակի կոնկրետ դրվագների վերամարմնավորումն են: Ռոբերտ Կամոյանի հետ, սակայն, անավարտ ծրագրեր ունենք դեռ: Նպատակ ունենք մեծադիր մի կտավում արտացոլել Մեսրոպ Մաշտոցի՝ Սյունիքի քաղաքական ու հոգեւոր կենտրոն Շաղաթ կատարած այցը եւ նրա հանդիպումը Հայաստանի ու Վրաստանի մարզպան, բոլոր ժամանակների ամենաշանավոր սյունեցիներից մեկի՝ քաջ սիսական Վասակի հետ:

– Հաճելիորեն նկատեցի, որ թերթի գիտական գործունեության մեջ որոշակի տեղ են զբաղեցնում Սյունիքին առնչվող պատմագիտական նյութերը (սկզբնաղբյուրի նշանակություն ունեցող) գրաբարից կամ միջին հայերենից արդի հայերենի փոխադրելու ջանքը:

– Աշխատանքի անսպառ ոլորտ է, թեեւ՝ ծախսատար ու շատ պատասխանատու: Հատկապես թեմատիկ համարներ պատրաստելիս նման աշխատանքներ կատարելու անհրաժեշտության առջեւ ենք կանգնում: Մեծ պատիվ է մեզ համար, որ առաջին անգամ մենք ենք նախաձեռնել մի շարք սկզբնաղբյուրների առանձին հատվածների՝ արդի հայերենի փոխադրման գործը: Թերթի հոբելյանական համարում Դուք կծանոթանաք նաեւ այդ «թարգմանությունների» ցանկին:

– Ձեր գործունեությանը հետեւողներից շատերի կարծիքով՝ «Սյունյաց երկրի» կենսունականության հիմնական գրավականը խմբագրակազմի պրոֆեսիոնալիզմն է, նվիրական աշխատանքը, թերթի շուրջ համախմբվածությունը:

– Ճիշտ դիտարկում եք կատարում: Թերթի տասը տարին իրողություն դարձավ բացառապես խմբագրակազմի շնորհիվ: Բայց Վահրամ Օրբելյանի, Արմինե Ավագյանի, Գրիգորի Սահակյանի եւ Գայանե Բաղդասարյանի անունները, այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում առանձնացնել: Եվ, ընդօրինակելով Ներսես Մոկացու ձեւակերպումը (նրա հայտնի «Ներբողեանը» զետեղել էինք Մելիք Հայկազն 2-րդին նվիր-

Զարգացում հոբելյանի առիթով

ված համարում, 30 մարտի 2013թ.), ուզում ենք նշված անձանց անվանել «Սյունյաց երկրի» սյուներ (առանց չափազանցության): Մոկացին էլ Սյունյաց մեծ անապատի սյուներ էր անվանել Մելիք Հայկազնին, Պողոս Մոկացի Վարդապետին, Սարգիս Ամբերդցի մեծ եպիսկոպոսին, տեր Կիրակոս Տրապիզոնցուն: Նրանք Սյունյաց մեծ անապատի հիմնադրման եւ կայացման գործում արեցին այն, ինչ վերոնշյալ անձինք «Սյունյաց երկրի» հիմնադրման ու կայացման համար: Եվ եթե նույնիսկ վաղը նրանք անցնեն այլ աշխատանքի, միեւնույն է, թերթի տարեգրության մեջ անջնջելիորեն կմնա այդ մարդկանց անունը: Թերթը, սակայն, մի երեւույթ է, որ վերջնական տեսք է ստանում բոլորի համատեղ աշխատանքով: Թերթում չկա երկրորդական աշխատանք, բոլորի գործն էլ անփոխարինելի ու կարեւոր է: Ուստի մեր երախտագիտությունն ենք հայտնում այսօրվա բոլոր աշխատակիցներին՝ Սլավիկ Նավասարդյանին, Աննա Պետրոսյանին, Զարինե Համբարձումյանին, Նուբար Դավթյանին, Մանե Դավթյանին, Վասիլ Սահակյանին, ինչպես եւ բոլոր նրանց, ովքեր անցած տասը տարում ինչ-որ ժամանակ աշխատել են խմբագրությունում: Թերթի հետ մշտական կապի մեջ են բազմաթիվ գիտնականներ, ստեղծագործողներ եւ՛ մարզից, եւ՛ մայրաքաղաքից, ու, անհրաժեշտության դեպքում, անշահախնդիր օգնության եւ աջակցության ձեռք են մեկնում: Նրանց նույնպես մեր անկեղծ հարգանքն ենք ընծայում: Թերթի շուրջ անցած տարիներին ձեւավորվել է բարեկամների ու մերձավորների մի մեծ ու հզոր փաղանգ, որը մեզ նեցուկ է եղել ամենադժվարին իրավիճակներում եւ նեցուկ է այսօր: Մեր խոնարհումը նրանցից յուրաքանչյուրին:

Մեկ ուրիշ խոստովանություն եւս. չլիներ ընտանիքիս եւ հատկապես կնոջս աջակցությունը՝ անհնարին կլիներ ամբողջապես թերթին նվիրվելը:

Բոլոր այդ գործոնների շնորհիվ է, որ հատկապես հիմա բազմաթիվ երիտասարդներ (ոչ միայն բանասերներ ու լրագրողներ) ցանկանում են աշխատել թերթում, համագործակցել խմբագրության հետ: Անհամեմատ մեծացել է մարդկանց թիվը (գիտնականներ, ստեղծագործողներ, լրագրողներ, շարքային քաղաքացիներ), ովքեր ցանկանում են տպագրվել «Սյունյաց երկրում», իսկ 2012թ. Աժ ընտրությունների քարոզարշավի ընթացքում պատգամավորի գրեթե բոլոր թեկնածուները ձգտում էին հանդես գալ «Սյունյաց երկրի» հարթակից: Չկա մի օր, որ մարզի որեւէ համայնքից, որեւէ կոլեկտիվից հեռախոսազանգ չստանանք ու տեղական խնդիրների, արած-չարածի լուսաբանման առաջարկություն եւ խնդրանք չլսենք: Եվ այդ ամենը հիշատակում ենք ոչ թե մեծամտանալու, հրճվանք ապրելու համար: Այդ ամենը մեզ հավելյալ պատասխանատվության է մղում...

– Եվ որո՞նք են այն հիմնարար սկզբունքները, գործելակերպի առանձնահատկությունները, որոնցով խմբագրակազմն առաջնորդվում է:

– Լինել ժամանակի ճշմարիտ վավերագրողը. ահա «Սյունյաց երկրի» գլխավոր առաքելությունը, ինչն արդեն իսկ որոշակի սկզբունքներ է ենթադրում:

Նախ՝ թերթի էջերը գլխավորապես տրամադրում ենք Սյունիքին առնչվող նյութերին: Եվ կարեւորում ենք տեղեկատվությունը սկզբնաղբյուրից, առաջին ձեռքից վերցնելը. գործելակերպ, ինչի համար պարբերաբար շրջում ենք մարզում: Միեւնույն շաբաթվա մեջ մեզ կարող եք տեսնել եւ՛ Մեղրիում ու Սիսիանում, եւ՛ Կապանում ու Գորիսում, եւ՛ ամենահեռավոր գյուղում: Իհարկե, դա աշխատատար գործելակերպ է, բայց այլ կերպ չենք պատկերացնում մարզային անցուդարձը լուսաբանելու առաքելության իրագործումը:

«Սյունյաց երկիրը» հանդիպման վայր է բոլորի համար՝ անկախ կուսակցականությունից ու կլանային պատկանելությունից, անկախ խմբագրի ու խմբագրակազմի համակրությունից ու հակակրությունից: Այսինքն՝ բազմակարծություն, բազմակողմանիություն, բոլորի համար արտահայտվելու հավասար հնարավորություն:

Լեզվական պատշաճ գրագիտություն. առանց այդ սկզբունքի, ճիշտն ասած, չենք պատկերացնում որեւէ լրատվամիջոցի գործունեություն:

Անաչառություն եւ օբյեկտիվություն, փաստերի, տեղեկությունների հավաստիության ստուգում եւ նոր միայն հրապարակում:

Հնարավորինս զերծ մնալ լրատվամիջոցների, լրագրողների հետ հակամարտությունից: Առհասարակ դա կարեւոր սկզբունք ենք համարում լրագրողական ամբողջ համքարության համար:

Մերժում ենք մանրաթեմայնությունը, որ հիմա շատ տարածված է ոչ միայն տեղական, այլեւ մայրաքաղաքային լրատվամիջոցներում: Սյունիքում կամ Սյունիքի մասին ասելիքն այնքան շատ է, որ մանր ու աննշանակ թեմաներին անդրադառնալն անիմաստ զբաղմունք է:

– Կա՞ արդյոք թերթ ընթերցելու ճգնաժամ, ինչպես հիմա ընդունված է ասել:

– Գույները խտացրած կլինենք, եթե տեղի ունեցող գործընթացները եւ նոր երեւույթները, գիտատեխնիկական առաջընթացով եւ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ պայմանավորված, ճգնաժամ համարենք տպագիր մամուլի համար: Տպագիր մամուլը, այս դեպքում «Սյունյաց երկիրն» ունի առանձնահատկություններ, որոնք, որքանով տեսնում ենք, առայժմ չեն կարող որդեգրել, օրինակ, էլեկտրոնային լրատվամիջոցները եւ, մասնավորապես, կայքերը: Սյունիքն ամբողջապես լուսաբանող այլ լրատվամիջոց առայժմ չենք տեսնում: Եվ, թող անհամեստություն չդիտվի, եթե ասենք՝ նման առաքելություն միայն «Սյունյաց երկիրն» է իրագործում:

Ամեն տարի ունեցել ենք միջին հաշվով 2000 բաժանորդ: Եվ այդ թիվը պահպանվում է, ու, կարծում ենք, կպահպանվի 2014-15թթ. նույնպես: Ընդ որում՝ ընդունված է ասել, որ մեկ թերթն ընթերցում է միջին հաշվով երեք հոգի: Թեեւ կայքերի բում է նկատվում հանրապետությունում, բայց մարդիկ, ըստ էության, շարունակում են ավելի շատ վստահել տպագիր խոսքին: Ի վերջո, տպագիր մամուլը (քիչ բացառությամբ) մեզանում այն հատուկենտ օղակներից մեկն է, որտեղ լեզուն վերահսկվում է, ինչը չենք կարող ասել էլեկտրոնային լրատվամիջոցների, այդ թվում՝ հեռուստաթերթերի ու կայքերի մասին (բացառությամբ մի քանիսի): Բայց մենք ունենք նաեւ մեր կայքի ընթերցողները՝ ամսական 2.5-3 հազար այցելու:

– Չէի՞ք կամենա գնահատական տալ հանրապետության լրատվական դաշտին:

– Մենք չէ, որ գնահատական պիտի տանք հանրապետության լրատվական դաշտին, եւ այս առիթով չէ, որ պիտի անդրադառնանք այդ հարցին: Բայց եւ շատ կուզենայինք, որ մայրաքաղաքային մամուլն այդպես հետեւողականորեն չշրջանցեր սյունիքյան հիմնախնդիրները: Կուզենայինք, որ լրատվամիջոցները, մամուլի ակումբները, գլխավորապես մայրաքաղաքի անցուդարձի լուսաբանումով չբավարարվեին, որ հեռուստաթերթում նաեւ մարզային կյանքն արտացոլվեր ըստ պատշաճի ու բազմակողմանի: Կուզենայինք, որ մանրաթեմայնությունը, անկարեւոր հարցերի լուսաբանումը դուրս մղվեին լրատվական դաշտից, քանի որ ավելի լուրջ խնդիրներ ունենք քննարկելու: Կուզենայինք, որ լրատվամիջոցներն ու կայքերը, ի վերջո, հրաժարվեին անստորագիր եւ կեղծ ստորագրությամբ նյութեր հրապարակելուց, որ լրագրությամբ զբաղվելու գլխավոր պայմանը հայոց լեզվի պատշաճ իմացությունը լիներ...

– Մի հարց էլ կա, որ, կարծեք, մտահոգում է մարզային ու համայնքային պարբերականների խմբագիրներին, նկատի ունենք մայրաքաղաքային ու մարզային լրատվամիջոցների աշխատանքի անհավասար պայմանները, բարձր իշխանության կողմից մարզային ու համայնքային լրատվամիջոցների հանդեպ դրսեւորվող խտրական վերաբերմունքը: Ի՞նչ կասեք այդ կապակցությամբ:

– Առհասարակ սխրանք գործելու պես բան է մարզային, համայնքային անկախ թերթ՝ հստակ պարբերականությամբ հրատարակելը: Պետության կողմից հատկացվող լրավճարը, ըստ էության, խորհրդանշական երեւույթ է: Ընդհանրապես անհասկանալի են սկզբունքները, որով առաջնորդվում է մշակույթի նախարարությունը լրավճարը բաշխելիս: Իշխանությունները նույնիսկ մայրաքաղաքային որոշ լրատվամիջոցների գովազդային դաշտում մենաշնորհներ ու արտոնություններ են տվել: Անգամ պետական կարեւոր միջոցառումներին ու նշանավոր օրերին մարզային թերթերի լրագրողներին չեն հրավիրում: 2010թ. հոկտեմբերի 13-16-ը Ստեփանակերտում մասնակցեցինք լրագրողների համահայկական 5-րդ համագումարին: Պատկերացնո՞ւմ եք, անգամ այդ միջոցառման շրջանակում անցկացվող որոշ հանդիպումների մասնակից էին անում միայն մայրաքաղաքային պարբերականների խմբագիրներին: Չենք խոսում հանրապետության ղեկավարների ասուլիսների մասին, որոնց մասնակցելը մի քանի լրատվամիջոցի մենաշնորհն է, ովքեր էլ նման միջոցառումներին ներկայանում են նախապես համաձայնեցված հարցերով...

– Եվ այդ ամենին կարո՞ղ ենք գումարել տեղեկատվություն ձեռք բերելու դժվարությունները, փակ գոտիների առկայությունը:

– Այդ դաշտում, խոստովանենք, որոշակի առաջընթաց կա, հիմա ավելի շատ ոլորտներում ու կառույցներում են առաջնորդվում թափանցիկության, հրապարակայնության սկզբունքով: Այդուհանդերձ, որոշ բնագավառներ շարունակում են լրատվամիջոցների համար փակ մնալ, առանձին պատգամավորներ, տնտեսվարող սուբյեկտների ղեկավարներ, զորամասերի հրամանատարներ ուղղակի անբարյացակամությամբ են վերաբերվում հրապարակայնությանը:

– Թերթին սպառնացող վտանգների, մարտահրավերների մասին...

– Թերթին եւ առհասարակ Սյունիքին սպառնացող թիվ մեկ վտանգը մարզում ներդրվող օլիգարխիկ համակարգն է եւ մարզը հանքահումքային բազա դարձնելու՝ օրավուր ակտիվացող քաղաքականությունը: Հիմա մարզը թեւակոխում է մի իրավիճակ, երբ բոլոր պետական կառույցները դառնում են օլիգարխիկ համակարգի, խոշոր կապիտալի կցորդ ու սպասավոր: Ավելին, մենք Սյունիքում գործ ունենք օլիգարխիկ համակարգի ամենահետադիմական տարատեսակի հետ: Տեսեք՝ Սյունիքը հայաստանյան խոշոր կապիտալի հանգրվաններից է (նկատի ունենք հանքարդյունաբերությունը): Եվ այդ խոշոր կապիտալի առկայության պարագայում, որքան էլ տարօրինակ է, Սյունիքում (համեմատած միջին հանրապետական ցուցանիշների հետ) առավել ցածր է բնակչության կենսամակարդակը, առավել շատ են արտագաղթողներն ու արտագնա աշխատանքի մեկնողները, առավել շատ են փակված դռներով բնակարանները, առավել մեծ է բնակչության ծերացածության ցուցանիշը, առավել բարձր են գործազրկության եւ աղքատության ցուցանիշները: Հայաստանի ոչ մի մարզում գյուղերն այնպես արագ չեն հանգչում, որքան Սյունիքում ու մասնավորապես Կապանի տարածքում: Հայաստանի ոչ մի տարածքում մահաբեր հիվանդություններն այնքան տարածված չեն, որքան Մեղրու եւ Կապանի տարածաշրջաններում: Թերթեք, խնդրեմ, պատմության էջերը, բացեք տնտեսագիտության գրքերը եւ կհամոզվեք, որ խոշոր կապիտալը, որպես կանոն, իր հետեւից մշտապես բերել է զբաղվածության խնդրի լուծում, ենթակառույցների զարգացում, մարդկանց կենսամակարդակի բարձրացում... Մեզ մոտ խոշոր կապիտալը հակառակ դերն է խաղում: Սյունիքյան խոշոր կապիտալի տերերը, ոչնչով չտարբերվելով օտար զավթիչներից, հանուն գերշահույթի պատրաստ են կուլ տալ-խժռել անգամ դարավոր գյուղերը, խմելու ջրի ջրահավաք ավազանները, բնության հրաշալիքները, պատմամշակութային հրաշալիքները, մարդկային գերեզմանները... Սյունիքյան խոշոր կապիտալի ներկայացուցիչները պատրաստ են փակելու ազատ խոսքի, բացախոսության բոլոր հարթակները եւ հնարավոր ամեն ինչ անում են այդ ուղղությամբ: Փոխարենը պատրաստ են (այդպես էլ վարվում են) հիմնադրել խամաճիկ լրատվամիջոցներ, պահել մարիոնետային լրագրողներ (նաեւ մայրաքաղաքում), որպեսզի ժամանակ առ ժամանակ հանրությանը ներկայանան մարգարեի տեսքով: Այնպես որ եւ՛ թերթի, եւ՛ ամբողջ Սյունիքի համար թիվ մեկ սպառնալիքը խոշոր կապիտալի մասնակցությամբ մարզում ներդրվող օլիգարխիկ-հակաազգային համակարգն է:

– Քիչ առաջ ներկայացրիք խմբագրության ծրագրերը թեմատիկ համարների տպագրության ուղղությամբ, բայց չասացիք հետագա մյուս անելիքների մասին:

– Նախ՝ դիմադրել մարզում ներդրվող օլիգարխիկ համակարգից բխող սպառնալիքներին եւ հնարավոր բոլոր միջոցներով թույլ չտալ, որ այդ համակարգը խժռի բացախոսության այս ամբիոնը եւս, որ կոչվում է «Սյունյաց երկիր»:

Խմբագրականներից մեկում ենք ասել՝ գնացել եւ գնալու ենք առավելն ասելու դժվարագույն ճանապարհով: Եվ մեր ձախողումը, նահանջը, եթե երբեւէ տեղի ունենա, ամոթալի չեն լինելու:

Կյանքը ցույց է տվել, որ Սյունիքի մարզային թերթը շաբաթական պարբերականության պահանջարկ ունի, ինչի համար հիմքեր կան, դրան էլ ձգտում ենք:

Աշխատակազմը մի քիչ ընդլայնելու եւ տեխնիկական բազան փոքր-ինչ հարստացնելու դեպքում թերթի կայքով կարող ենք տալ ամենօրյա լուրեր, ընդ որում՝ եւ՛ գրավոր տարբերակով, եւ՛ տեսապատկերներով. կայքն այդպիսի հնարավորություններ ունի:

Այս տարեսկզբին մեզ հաջողվեց մի կարեւոր քայլ կատարել՝ խմբագրությանը կից ստեղծել գեղարվեստական խորհուրդ՝ Տիգրան Գրիգորյան բանաստեղծի եւ թարգմանչի ղեկավարությամբ: Գեղարվեստական խորհրդի օգնությամբ առաջին անգամ, կարծեք, կարգավորվում է թերթի գրական բաժինը, մանավանդ որ ստեղծագործողներից շատերն են ցանկանում տպագրվել «Սյունյաց երկրում»: Եվ բառի, պատկերի նկատմամբ տիգրանգրիգորյանական զգուշավոր ու պատասխանատու վերաբերմունքի պրիզմայով էլ ձգտում ենք մոտենալ հրապարակվող գեղարվեստական գործերին:

Դե հարմար խմբագրատան բացակայության մասին չենք խոսում, քանզի այդ խնդիրը ներկայումս հնարավոր չէ լուծել, մյուս կողմից էլ վաղուց ենք հռչակել մեր գլխավոր սկզբունքներից մեկը՝ մեզ փնտրեք միայն թերթի էջերում:

Մեզ լրջորեն վնասում է առաքման ներկայիս համակարգը. դա համահայաստանյան խնդիր է:

– Չնայած դժվար է եղել թերթի անցած ճանապարհը, բայց, որքանով տեղյակ ենք, հետաքրքիր ավանդույթներ են ձեւավորվել խմբագրությունում:

– Աստծո կամոք մի բարի ավանդույթ է մեզանում ձեւավորվել, եթե, իհարկե, դա ավանդույթ կարելի է համարել: Անցած տարիներին մեր գործընկեր աղջիկներից չորսն ամուսնացել են, նրանք արդեն երեխա ունեն: Խմբագրությունը նրանց համար հերանց տուն է, իսկ երեխաները խմբագրության թոռներն են: Արդեն իսկ թեւավոր խոսք է ձեւավորվել այդ կապակցությամբ՝ թերթի խմբագրությունը խերով տեղ է՝ աղջիկները շուտ են ամուսնանում...

...Գրեթե ամեն տարի (մի քանի անգամ) արշավներ ենք կազմակերպում եւ լինում մարզի տեսարժան, հաճախ՝ միայն ձիերով կամ ոտքով հասանելի վայրերում, ինչը թույլ է տալիս առավել ամբողջական ու մանրամասն ճանաչել Սյունիքը: Այս տարի, օրինակ, օգոստոսի 9-ին այցելեցինք Լիճքի (Զվարի) ջրվեժներ: Բնության հրաշք վայրերից է. ով չի տեսել այդ վայրերը, չի տեսել Մեղրին: Օգոստոսի 25-ին էլ այցելեցինք Սիսիանի տարածքում գտնվող Ուղտասար հնավայր, որտեղ կա ավելի քան երկու հազար պատկերազարդ քար: Դրանք հայտնաբերվել են 1966թ.: Ծովի մակերեւույթից 2900-3300մ բարձրության վրա գտնվող ժայռաբեկորների վրա քանդակված պատկերները մ.թ.ա. V-IV հազարամյակների ստեղծագործություններ են (առայժմ այդպես է թվագրված): Իսկ գարնան երրորդ օրը՝ մարտի 3-ին, այցելեցինք Խանածախի անապատ, որը, հիրավի, աշխարհի հրաշալիքներից է:

– Պարո՛ն խմբագիր, շնորհակալություն հարցազրույցի համար, կրկին շնորհավորում եմ եւ՛ Ձեզ, եւ՛ խմբագրության աշխատակիցներին ու աջակիցներին՝ թերթի հոբելյանի կապակցությամբ, եւ մաղթում նորանոր հաջողություններ, մերօրյա մարտահրավերներին արժանապատիվ դիմակայելու կամք, վճռականություն եւ կարողություն:

Հարցազրույցը՝
ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Շնորհավորանք հայ գրողներից

ԽՈՍՔ Ի ՊԱՏԻՎ «ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿՐԻ»

ԼԵՎՈՆ ԽԵՉՈՅԱՆ

Որոշ իշխանավորներ պատկերացում կամ պատրանք են ստեղծում, թե Սյունիքը եւ թե մասնավորապես Գորիսը, Կապանը, Մեղրին կկարողանային կայանալ անկախության շրջանում, եթե քաղաքական իշխանության մեջ անգամ չլիներ խիզախների «Սյունաց երկիր» թերթի ոգու իշխանությունը:

Կարելի է գեղեցիկ խոսքեր շռայլել թերթին, միայն այն բանի համար, որ ամենածանր պատերազմական տարիներից սկսած՝ ցրտին, շոգին, մթին, սովին դիմակայել է ուժեղի խոսքով, ժողովրդի հետ ոտ-ոտ առաջ է գնացել: Համարձակություն է ունեցել վայրի մեղվի պես դառը խոսք ասել ներքին թշնամիներին, որոնք անձնական շահը Սյունիքի շահից բարձր են դասել: Այսպես բացեիբաց գովեստով եմ խոսում այս թերթի մասին, որովհետեւ նրա բոլոր խիզախ աշխատակիցներին ճանաչում եմ: Խիզախ եմ ասում, որովհետեւ մի անգամ երեկոյան երկար, շատ երկար խոսում էինք այն մասին, թե ինչպես են լեռան կողքին՝ նրա խոռոչներում ձայն տվող վայրի քամուն լսելով իրենք մեծացել, եւ թե մեր պատմության ընթացքում ինչպես էր հնչել եւ զրնգացել Խուստուփ լեռը:

ԽՈՍՔ ԻՄ ԺՈՂՈՎՐԴԻՆ

բանաստեղծի խոսքը թերթի հոբելյանի առթիվ

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սիրտդ անվե՜րջ բզկտել են, հոգիդ արել ծվեն-ծվեն,
Քո ավետյաց բնօրրանը հազա՜ր անգամ դարձավ գեհեն,
Հազար դար է՝ քո հավատից գեթ մի կտոր չպակասեց,
Կամքիդ առաջ պիտի բոլոր աստվածները լուռ խոնարհվեն...

Դու հավերժի Մե՜ծ ճամփորդն ես՝ խիզա՛խ անհուն, երազդ՝ ջինջ...
Ու փա՜ռք Աստծուն՝ քո՞նն է էլի քո հայրենյաց սուրբ հողը հին,
Անկախության հողմի բերած կսկիծները կվերանան...
Մորմոքներդ՝ ղարաբաղյան ափեր գտած, թող մեղմանան...

Հազա՜ր-հազա՜ր տարիներ են եկե՜լ-անցե՛լ, անց կկենան,
Քո հոգե՛րը, գո՛ված ու սերը, միշտ եղել են ու կմնան,
Եթե նորից, Աստված չանի, արհավիրքնե՜ր գան ու գնան՝
Քո դարավո՛ր արմատները ամե՜ն ինչի կդիմանան:

ԱՆԵՐԵՐ ՀԱՎԱՏԻ ԱՐԳԱՍԻՔԸ

ԳԱԳԻԿ ԴԱՎԹՅԱՆ

Տասը տարի: Սեփական դեմքը, ձեռագիրը, ասելիքն ու ասելածը գտնելու, ասել է, թե՝ ինքնահաստատվելու համար շա՞տ է, թե՞ քիչ: Հարցը երկրորդական է դառնում մեր վայրիվերո ժամանակներում, երբ առտնին հոգսերի հորձանուտներում շնչասպառ ամեն օրդ թվում է անվերջանալի, սակայն հետադարձ հայացքի բարձունքից պարզվում է, որ ապրածդ յուրաքանչյուր տարին մի ակնթարթ էր ընդամենը:

«Սյունյաց երկրի» ավելի քան կրկնակի տարիքն ունեցող, այլեւայլ աղբյուրներից շռայլորեն սնվող լրատվամիջոցներ կան հանրապետությունում, որոնց համար աշխարհն սկսվում է իրենց ծննդյան օրից եւ որոնց էջերից, մամուլի պատմության ապագա տարեգիրները, երբ մի կողմ նետեն այսրոպեական խնդմնդուք հարուցող ծեքծեքումները, ասեկոսեն ու բամբառակությունը, հիշատակության արժանի ոչինչ կամ գրեթե ոչինչ չեն կարողանալու գտնել:

Այս համապատկերում «Սյունյաց երկիրը», որ աշխարհ եկավ եւ գործում է տարրական գոյության համար չափազանց անբարենպաստ պայմաններում, իր վաստակաշատ ու անդադրում հիմնադիր խմբագրի գլխավորությամբ, փորձառու եւ հընթացս ձեւավորվող սակավաթիվ լրագրողներով, կարողացավ անհնարինը դարձնել հնարավոր, եւս մի անգամ հաստատելով, որ հրաշքներ չեն կարող կատարվել այնտեղ, որտեղ հրաշքների չեն հավատում:

Ահա այդ աներեր հավատի, անսահման նվիրումի, գերմարդկային ջանքերի արգասիքն է քայլ առ քայլ առնականացող տասնամյա «Սյունյաց երկիրը» - անկաշկանդ, շիտակ ու անվրեպ խոսքի զանգահարը, հոգեւոր ճշմարիտ արժեքների քարոզիչը, ներկան եւ անցյալը կամրջող հիշատակարանը, հայրենի եզերքի հանդեպ պաշտամունքի հասնող ծնրադիր սիրո մատյանը, որի յուրաքանչյուր համարին սպասել եւ սպասում են ոչ միայն Սյունիքում եւ ոչ միայն սյունեցիները: Սպասում են, որովհետեւ նրա նույնիսկ ամենաթունդ շեշտադրումները համակված են վաղվա օրն ավելի լավը տեսնելու մտահոգությամբ:

Շնորհավոր տոնդ, «Սյունյաց երկիր»: Շնորհավոր բոլոր բարեկամներիդ տոնը: Բարի ճանապարհ դեպի տոնական նոր հանգրվաններ:

«Սյունյաց երկրի» նախաձեռնությամբ

Ցանկ գեղանկարների՝ ստեղծված «Սյունյաց երկրի» պատվերով ու տպագրված թերթում (2003-13թթ.)

- «Ակսել Բակունց», կտավ, յուղաներկ, 100X70, 2008թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան: Գեղանկարի հովանավոր՝ «Առանցք» ՍՊԸ տնօրեն Գագիկ Առուշանյան (տես՝ «Սյունյաց երկիր», N13 (185), 8 հունիսի 2008թ.):
- «Ագարակ», կտավ, յուղաներկ, 100X80, 2009թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան, հովանավոր՝ Սամվել Հայրապետյան (տես՝ «Սյունյաց երկիր», N19, (191), 10 հոկտեմբերի 2009թ.):
- «Խաչատուր Աբովյան», կտավ, յուղաներկ, 70X60, 2009թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան, հովանավոր՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյան (տես՝ «Սյունյաց երկիր», N23 (195), 10 դեկտեմբերի 2009թ.):
- «Սուրբ Գրիգոր Տաթեւացի», կտավ, յուղաներկ, 70X60, 2010թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան, հովանավորներ՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյան, Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Յուրի Սաֆարյան, «Հենրիկ եւ որդիներ» ՍՊԸ տնօրեն Հենրիկ Հարությունյան, «Առանցք» ՍՊԸ տնօրեն Գագիկ Առուշանյան (տես՝ «Սյունյաց երկիր», N16 (213), 25 սեպտեմբերի 2010թ.):
- «Համո Սահյան», կտավ, յուղաներկ, 85X83, 2011թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան, հովանավոր՝ Աշոտ Մինասյան (տես՝ «Սյունյաց երկիր», N 7 (226), 14 ապրիլի 2011թ.):
- «Ռաֆիկ Մինասյան», կտավ, յուղաներկ, 90X70, 2011թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան, հովանավոր՝ Արտուր Աթայան (տես՝ «Սյունյաց երկիր», N8 (227), 4 մայիսի 2011թ.):
- «Ջագ Նահապետը հիմնադրում է Ջագեձորի բերդը», կտավ, յուղաներկ, 170X110, 2010թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան, հովանավորներ՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյան, Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյան, (տես՝ «Սյունյաց երկիր», N10 (229), 28 մայիսի 2011թ.):
- «Սիսակ Նահապետ», թուղթ, ակրիլ, տեմպերա, պաստել, բրոնզ, 45X57, գրաֆիկական աշխատանք, հեղինակ՝ Ռուբեն (Ուբակ) Կոստանդյան (տես՝ «Սյունյաց երկիր», N10 (229), 28 մայիսի 2011թ. եւ N22-23 (158-159), 27 օգոստոսի 2008թ.):
- «Նիկողայոս Ադոնց», կտավ, յուղաներկ, 82X64.5, 2011թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան, հովանավոր՝ Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյան:
- «Վահանավանքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու նավակատիքը 911 թվականին», կտավ, յուղաներկ, 200X140, 2011թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան, հովանավոր՝ «Վահանավանք» պատմամշակութային ՀԿ (նախագահ՝ Սասուն Մանուկյան), (տես՝ «Սյունյաց երկիր», N30 (271), 15 դեկտեմբերի 2012թ.):
- «Մելիք Հայկազն 2-րդ», կտավ, յուղաներկ, 100X90, 2013թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան, հովանավորներ՝ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյան, Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյան (տես՝ «Սյունյաց երկիր», N7 (280), 30 մարտի 2013թ.):

Շնորհավորանք պատվավոր մարդիկներից, պարծանքներից

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿՐԻ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ

ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ
Սյունիքի մարզի դատախազ

«Սյունյաց երկրի» տարիների գործունեությունը մեր աչքի առաջ էր, անգամ Երեւանում աշխատելու ժամանակ մեզ հետաքրքրում էին թերթի հրապարակումները, քանի որ նրա էջերում հիմնականում սյունիքյան թեմաներ էին: Վերջին մեկ տարում, սակայն, «Սյունյաց երկիրը» մեզ համար ոչ միայն տեղեկատվության աղբյուր է, այլեւ գործընկեր՝ մարզի դատախազության աշխատանքների թափանցիկությունն ապահովելու, բնակչության շրջանում իրավական գիտելիքներ տարածելու հարցերում: Եվ թերթի խմբագրակազմի պրոֆեսիոնալիզմը թույլ է տալիս այդ աշխատանքները կատարել պատշաճ մակարդակով: Մյուս կողմից՝ թերթը եղել եւ մնում է Սյունիքի մարզի անցուդարձը խորությամբ ու բազմակողմանիորեն ներկայացնող լրատվամիջոցը:

Շնորհավորում եմ թերթի հոբելյանը, ցանկանում առկա հիմնախնդիրների լուծում եւ ստեղծագործական հաջողություններ: ■

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՊԱՏՐԻԿ ԼՈՐԵՆ
«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն

Հարգելի պարոն Ալեքսանյան

Թույլ տվեք շնորհավորել Ձեզ եւ Ձեր խմբագրակազմին՝ թերթի հիմնադրման տասնամյակի առթիվ: Մեր համագործակցությունը երկար տարիների պատմություն ունի եւ ողջունելի է, որ անցած ժամանակաընթացքում թերթը լուսաբանել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲ ընկերության ձեռքբերումները, նկատել թերությունները, ինչպես նաեւ լուսաբանել մեր ընկերության իրականացրած ծրագրերն՝ ուղղված Սյունիքի մարզի բնակչության ջրամատակարարման բարելավմանը:

Կրկին շնորհավորում ենք Ձեզ՝ ցանկանալով նորանոր հաջողություններ եւ ստեղծագործական վերելք:

Փոխշահավետ, երկարատեւ համագործակցության ակնկալիքով... ■

Ա. ՊԱՅԴԻ
Կիսանձնակազմ ավտոմոտոհրաձգային գնդի

Ձեզանից մեր ժամանակների “Սիրելի Ընկեր” Ալեքսանյանին

Ամենամեծ շնորհավորանքներս ինձ եւ իմ ընկերներիս կողմից՝ Ձեզ՝ մեր հարազատ գնդի 10-ամյակի առթիվ:

Հանդիսավոր պարերի ներկայացումներ, ինչպես նաեւ ամենաբարձր մակարդակի զորավարժություններ: Ամենամեծ գնահատանքներ՝ Ձեզ՝ գնդի հրամանատարներ՝ Ձեզ՝ գնդի հրամանատարներ՝ Ձեզ՝ գնդի հրամանատար

էջեր տարեգրությունից

Թերթի ծննդյան օրվա կապակցությամբ հրապարակված խմբագրականներից մեկը

ՄԵՋ ՓՆՏՐԵՔ ԹԵՐԹԻ ԷՋԵՐՈՒՄ

Իրականությունը տեսնելու եւ տեսնել տալու ձգտումն է մեր ճանապարհը

30 սեպտեմբերի 2006թ.

Փոքրկածուփ երեք տարի է անցել այն օրվանից, երբ լույս տեսավ «Սյունյաց երկրի» առաջին համարը: Այդ ժամանակ էլ ճակատագրի անողորմ «աստվածները» սկսեցին կանխատեսել թերթի փակում-կործանում-լուծարում, բայց... Շնորհիվ խմբագրակազմի ու ընթերցողի անշահ նվիրումի, այդ գուշակություններն իրականություն չդարձան: Ավելին, թերթն արմատներ արձակեց հողի մեջ, խարիսխ ձգեց իրականության ափին՝ դառնալով գործոն մարզի հասարակական-քաղաքական կյանքում: Ստեղծվեցին ավանդույթներ, ստեղծվեց մտավորական-լրագրողական-ընթերցողական սեփական միջավայր, որն ամենեւին էլ չի սահմանափակվում Սյունիքով: «Սյունյաց երկիրը» դարձավ մեր օրերի, մեր ժամանակի թերթ: Իսկ մեր լինելիության գլխավոր երաշխիքներից մեկը եղավ հանրապետության լրագրողական համքարության անվերապահ զորակցությունը թերթի խմբագրակազմին:

Սակայն հզոր Սյունիք ունենալու մասին անվերջ ճամարտակող տեղական ցեցերն այդպես էլ չհաշտվեցին «Սյունյաց երկրի» գոյության հետ: Եվ չզլացան հարուցել բազմաթիվ դժվարություններ, որոնք պահպանվում են առայսօր: Կապանի քաղաքային իշխանությունն այնքան չար եւ մաղձոտ գտնվեց, որ չցանկացավ՝ համարձակվեց գործող օրենքների սահմաններում որեւէ տարածք տրամադրել՝ գործունեություն իրականացնելու համար, թեեւ տարածք հատկացնելու համար կային անգամ ՀՀ նախագահի աշխատակազմի, հանրապետության վարչապետի հանձնարարականները: Բազմաթիվ պաշտոնյաներ վախեցան (մինչեւ հիմա էլ վախենում են) բաժանորդագրվել «Սյունյաց երկիր»՝ մտածելով, որ դրանով կխախտեն նախիրի օրենքը: Որոշ չինովնիկներ էլ, նաեւ զազիր նախարար, չխորշեցին բանեցնել սեփական իշխանական մտրակը, երբ թերթը հանդգնեց թեթեւակի անցնել այն մարգագետնի կողքով, որտեղ իրենք են արածում: Տերունական բյուր եւ անհամար մեղքերի բեռնակիր դատախազական եւ դատական գրասենյակները զավեշտախաղի վերածեցին խմբագրության հանդեպ կիրառված բռնության երկու դեպքի քննությունը:

Երեք տարվա ընթացքում, միաժամանակ, սյունիքյան լրագրողական համայնքում շրջող փոխադարձ անվստահության ուրվականը վերջնականապես միս ու արյուն առավ: Պատճառն այն էր եւ է, որ լրագրողի սքեմով այս համքարությունում ներդրված բարակ ձայնով տղաներն ու չեղած բարեմասնություններով կարիերա շինող մեկ-երկու նաժիշտ համառորեն փորձում են ընդլայնել անմաքրության եւ ստի անդաստանը, փորձում են տեղական առանձին վարիչների բնականոն գործունեության, բացախոսության պատրանք ստեղծել՝ չամաչելով նույնիսկ սեփական մերկությունից, անհանճար խոսքից ու մտավոր տկարությունից:

Ոտք դնելով մեր ընթացքի չորրորդ տարում՝ շարունակում ենք մնալ ուխտավոր եւ հավատավոր վաղվա օրվա հանդեպ: Շարունակում ենք մնալ վերկուսակցական, վերկլանային դիրքերում: Երիցս հայտարարում ենք՝ մեր ընտրությունը գիտակցված է: Մենք մեզանից հեռանալու, երկվության մեջ ընկնելու պատճառներ չունենք:

Մեր ճանապարհի, մեր հավատամքի անշրջելիությունը, որ նաեւ ընթերցողի պահանջն է, այլեւս իրողություն է: Դա ենթադրում է նաեւ ընթերցողի հետ կապի հետագա սերտացում: Օրակարգում է, մասնավորապես, թերթի թողարկման պարբերաշրջանի կրճատումը. գոնե 2007-2008՝ քաղաքականորեն հագեցած տարիներին տասնօրյա կամ շաբաթական պարբերականության ապահովում, թերթի էլեկտրոնային տարբերակի թողարկում եւ այլն:

Այո, մեր երթը շարունակվում է…

Շնորհավորանք Հայաստանի ժուռնալիստների միությունից եւ լրատվամիջոցներից

ԱՍՏՂԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ

«Սյունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանին

Հայտնի միտք է. թերթն իր ժամանակի, իր երկրի ճշմարիտ տարեգիրն է:

«Սյունյաց երկրի» դեպքում նաեւ իր տարածաշրջանի, իր հողի, լեռնաշխարհի, հերոս ու իմաստուն զանգեզուրցիների, մեր փառավոր երախտավորների կյանքի, արարումների ճշմարիտ տարեգիրը:

Ահա տասը տարի է՝ թերթը թեմաների հարստությամբ, բովանդակությամբ, գրագետ, գեղեցիկ ձեւավորմամբ եւ, ամենակարեւորը, շքեղ հայերենով, դարձել է ընթերցողների հաճելի զրուցակիցը, անբաժան ու հուսալի բարեկամը: Եվ հատկանշական է, որ բացի Զանգեզուր աշխարհից «Սյունյաց երկիրը» հետաքրքրում է հանրապետության մյուս քաղաքների ու բնակավայրերի ընթերցողներին:

Թերթի ստեղծագործող աշխատակազմը քաջ գիտակցում է, որ միայն որակյալ եւ պատասխանատու մամուլին է սպասում ընթերցողը, որ ժամանակն ամենաարդար քննադատն է, իսկ տասը տարիներին լույս տեսած յուրաքանչյուր համար ստացել է իր բարձր գնահատականը:

Շնորհավոր տասնամյա հոբելյանդ, «Սյունյաց երկիր», շնորհավոր թերթի աշխատողներին, բոլորին, ովքեր թեկուզ մի փոքրիկ մասնակցություն ունեն թերթի ստեղծմանը, եւ, իհարկե, հավատարիմ ընթերցողներին, առանց որոնց չէր հնչի «Սյունյաց երկրի» ճշմարիտ խոսքը:

ՌՈՒԲԵՆ ՍԱԹՅԱՆ

«Նովոյե վրեմյա» թերթի գլխավոր խմբագիր

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմին

Հարգելի գործընկերներ

Ընդունեք մեր ջերմ եւ անկեղծ շնորհավորանքները «Սյունյաց երկրի» տասնամյակի կապակցությամբ:

Տպագիր մամուլի համար ոչ այնքան դյուրին ժամանակներում դուք կարողացաք Սյունիքում հիմնադրել թերթ եւ անցնել կայացման ու ինքնահաստատման դժվարին ճանապարհ, ուրույն տեղ զբաղեցնել հանրապետության լրատվամիջոցների անդաստանում:

«Սյունյաց երկիրը» մեզ համար եղել ու շարունակում է մնալ հանրապետության այդ մարզի իրողությունների մասին օբյեկտիվ տեղեկատվություն քաղելու գլխավոր սկզբնաղբյուրը:

Մենք հաճույքով ենք նկատում, որ «Սյունյաց երկիրը» հասցնում է լինել մարզի ամեն մի համայնքում, աշխատանքային ամեն մի տեղամասում, պրոբլեմների ու թեժ իրավիճակների հորձանուտում:

Մենք տեսնում ենք, թե ինչպես է «Սյունյաց երկիրը» հետեւողականորեն լուսաբանում երկրամասի հիմնախնդիրները՝ համարձակորեն սեփական տեսակետ հայտնելով դրանցից յուրաքանչյուրի լուծման վերաբերյալ:

Իհարկե, դժվար ճանապարհ է անցել «Սյունյաց երկիրը», բայց, շնորհիվ խմբագրակազմի պրոֆեսիոնալիզմի ու նվիրական աշխատանքի, թերթը կարողացել ու կարողանում է անցնել ժամանակի ալեբախումների միջով եւ ճշմարիտ խոսքով վավերագրել Սյունիքի մերօրյա պատմությունը, նպաստել հանրապետության հարավարեւելյան սահմանների ամրապնդմանը, Սյունիքում քաղաքացիական հասարակության ձեւավորմանը, մեր նոր պետականության հզորացմանը, մարզի բնակչության առջեւ ծառացած հիմնախնդիրների աստիճանական լուծմանը:

«Սյունյաց երկիրը» տարիների ընթացքում նաեւ հայրենագիտության իսկական մի դպրոց է դարձել, ինչի վկայությունը ժամանակ առ ժամանակ թողարկվող համարներն են՝ նվիրված Սյունյաց մեծերին ու Սյունիքի անցյալին, բնակավայրերին ու պատմամշակութային վայրերին:

Հարգանք ձեզ, հարգելի գործընկերներ:

Ծնունդդ շնորհավոր, «Սյունյաց երկիր»:

ԱՐԾՎԻ ՃԱԽՐԱՆՔԸ



ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿՅԱՆ

Գրող-հրապարակախոս, Հայաստանի ժուռնալիստների միության «Ոսկե գրիչ» մրցանակի դափնեկիր

Սյունիքը Հայաստան լեռնաշխարհի հարավային վահանն է, անառիկ բերդամրոցը, որը հաղթանակով ավարտեց դարավերջի ազատամարտը՝ հերթական անգամ թույլ չտալով, որ ոսոխը պղծի հերոսների արյամբ սրբացած հողը: Այն, ինչ նվաճեցին սյունեցի երկրապահներն ու նորաստեղծ ազգային բանակի մարտիկները, նրանց զավակներն ու թոռները, պարտավոր ենք պահպանել մեր խաղաղ օրերում, ժառանգել սերունդներին: Այդ կենսական առաքելությանն է կոչված «Սյունյաց երկիր» պարբերականը, որի ամեն մի նոր համար հայրենանվիրումի նոր դաս է, պատգամ-պատվիրան: Պարբերականի խմբագրակազմը լրագրական հռետորաբանությանը տուրք չի տալիս, չի տարվում զգայահարույց մանրախնդիրներով: «Սյունյաց երկիրը» իր համարները հանրագիտարանային ճշգրտությամբ, պատմագեղարվեստական հիմնավորմամբ ու ընդգրկմամբ նվիրում է լեռնաշխարհի հիշարժան իրադարձություններին, ամենատարբեր բնագավառների գործիչներին՝ նրանց օրինակով ուղեցույց դառնում ընթերցողին: Եվ նկատի ունենալով այն հանգամանքը, որ պարբերականը լույս է տեսնում հրատարակչական բարձր մակարդակով, գեղարվեստական անթերի ճաշակով, մնում է հուսալ ու հավատալ, որ մեր օրերում լույս տեսած համարները երկար պիտի պահպանվեն, իրենց պատգամ-պատվիրանը հաղորդեն նաեւ ապագայի ընթերցողին:

Մեր գրչընկերն ու բարեկամը՝ Սամվել Ալեքսանյանը, արդեն տասը տարի է՝ խմբագրում է «Սյունյաց երկիրը»: Մեր օրերում թերթ հրատարակելը դժվար է, նման ստվարածավալ, հարուստ բովանդակությամբ ու ճոխ ձեւավորմամբ թերթ հրատարակելը (եթե, իհարկե, «Սյունյաց երկիրը» ավանդական առումով թերթ կարելի է կոչել) առավել, քան դժվար: Այնուամենայնիվ, նկատի ունենալով գլխավոր խմբագրի եռանդն ու նվիրումը սիրած գործին՝ ոչ ոք չի կասկածում, որ «Սյունյաց երկրի» նոր համարները դեռ երկար են ուրախացնելու, հայրենանվիրումի ձեռնարկ-դասընթացներ դառնալու:

Սյունիքի լեռնային սահմանում հառնում է ազգային նորանկախ պետականության խորհրդանիշը՝ հայոց եռագույնը: Նրա ծփանքն արծվի լայն բացված թեւերի նման ճախրում է հեռու-հեռուները, որտեղ մեր բռնագրավված բնօրրանն է: Իր ընթերցողների ուշադրությունը, ահա, այդ ուղղությամբ է սեւեռում «Սյունյաց երկիրը»:

ՖԱՀՐԱԴ ԱՓՈՒՋԱՆՅԱՆ

«Լուսարձակ» թերթի գլխավոր խմբագիր, ք.Սպիտակ

«Սյունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանին

10 տարի առաջ, ձեռամբ Սամվել Ալեքսանյանի, իր երթն սկսեց «Սյունյաց երկիր» մարզային թերթը, եւ հոբելյանական այս օրն օրինական հպարտությամբ կարող ենք արձանագրել, որ թերթն իր գործն արել եւ անում է ազնվորեն, եւ որ սերունդները թերթից սովորելու շատ բան են ունենալու:

Այսօր տոնական է ոչ միայն խմբագրության, Սյունյաց աշխարհի, այլեւ ժուռնալիստական հանրության համար:

Հիրավի թերթի 10-ամյա ընթացքը մի ճանապարհորդություն է՝ լի հաջողություններով եւ գալիքի երջանիկ սպասումով: Եվս մի ապացույց, որ հզոր է երկրապահ Սյունիքը, հզոր է նրա ժողովուրդը, հայ ժողովուրդը, հզոր է իր լեռների պես՝ կանգնած ու պտղաբերող:

Թերթի ամեն համարի էջերում երեւում են հզոր Սյունիքի մարդիկ եւ նրանց կատարած գործերը: Թերթը մշտապես տպագրել է մարզի, նրա ժողովրդի, սյունեցու հաջողություններն ու ձեռքբերումները, կյանքի լույսն ու ստվերը, այն թեմաները, որոնք ակտուալ են, կարոտ լուծումների:

10-ամյա այս «պատանու» էջերը լի են իմաստությամբ եւ հետաքրքիր բովանդակությամբ, որի շնորհիվ թերթն արդեն իսկ իր արժանի տեղն է գտել ոչ միայն հասարակության, այլեւ ժամանակակից հայ մամուլի պատմության մեջ:

Այս ամենով հանդերձ՝ մեծագույն ուրախությամբ պետք է արձանագրել, որ ի շարս այլ հոդվածների, բազմաբովանդակ ու բազմաբնույթ շատ այլ թեմաների հրապարակումների՝ թերթն ի պատիվ իր հմուտ ու ջանասեր, նվիրյալ խմբագրի՝ Սամվել Ալեքսանյանի, տարբեր առիթներով լույս է ընծայում նաեւ բացառիկ համարներ, որոնցից յուրաքանչյուրը բանասիրական, պատմական, ազգագրական, փիլիսոփայական մտքի փայլատակումներ եւ այդ ոլորտները լուսաբանող ծանրակշիռ հատոր է:

Թերթի լույս ընծայման 10-ամյակի առթիվ շնորհավորում եմ

Բոլորիս եւ մաղթում թերթին նորանոր համարներ՝ հավատով, որ անցնելիք ճանապարհը լինելու է երկարատեւ:

Առանց տատանվելու եւ երկմտելու թերթի խմբագրապետին ու խմբագրակազմին եմ հղում 2001թ. «Լոռի» թերթին հասցեագրված Հրանտ Մաթեւոսյանի խոսքը, որ շատ այժմեական է ու նաեւ տիպիկ «Սյունյաց երկրի» համար:

«Այս ավերի ու ավարի մեջ ապավինում եմ մեր բարձր ու տիրական խոսքին, որ ծաղկումի ու սիրո վստահության կկոչեր աշխարհի այս ամենասիրելի երկրին ու ժողովրդին, որ Լոռին ու լոռեցին են (իմա Սյունիքն ու սյունեցիները) եւ հույսս դարձյալ մամուլի աշխատողներս ենք: Եթե մեր խոսքը ձայն բարբառոյ անապատի է լինելու, միեւնույնն է, անապատի խլություն թող մեր ծիծաղն ու քաջությունը թռչի, եւ ոչ թե անեծքն ու դժգոհությունը: Ապրեցեք եւ ապրեցրեք: Ձեր Հրանտ Մաթեւոսյան»:

Պարոն Ալեքսանյան, դուք, որ մատենագրի եւ տարեգրի նման խմբագրակազմի հետ միասին պատմություն եք կերտում՝ արձանագրելով տասնամյակ, թող Աստծո օրհնությամբ արձանագրվի նաեւ 50… 100 … եւ բազում այլ ամյակներ:

Շնորհ, սեր եւ խաղաղություն ամենքին: Ամեն:

10-ԱՄՅԱ ՀԱՂԹԱԿԱՆ ՈՒՂԻ

ԳՐԵՏԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Զանգեզուր» թերթի խմբագիր

Բազմաթիվ անգամ խելոք ու մտավորական մարդիկ մեզ հետ ունեցած զրույցում շեշտել են. «Հերոսություն է մեր օրերում թերթ տպագրելը»: Իսկ լրատվամիջոցների ղեկավարները, լրագրողները դա արել են մեծ զոհողությունների գնով, արել վճռականությամբ, կամքի ուժով, լցված լավատեսությամբ ու երբեք չեն հուսահատվել: Ինչպես լրագրողներից մեկն է ասել. «Տպագիր մամուլը կլինի այնքան ժամանակ, քանի դեռ մեկ մարդ կմնա 20-րդ դարից»:

Սա փոքրիկ պատասխան՝ ուղղված տպագիր մամուլի նկատմամբ մտավախությամբ ապրող մարդկանց:

Իսկ հիմա մեր շնորհավորական խոսքը «Սյունյաց երկրի» կոլեկտիվին:

Շնորհավոր ձեր տոնը:

Ձեր թերթը շատ կենսունակ է, եւ երկար կլինի նրա անցնելիք ճանապարհը: Դա այն պատճառով, որ թերթի աշխատողները մարզում մեծ լրագրությունն են անում, մարզի ճշմարիտ տարեգրությունը հյուսում: «Սյունյաց երկիրն» ապրում է մարզի հոգսաշատ առօրյայով. թարմացնում մարզի պատմական հիշողությունները, անդրադառնում հասարակական-քաղաքական ցնցումներին, մարդկային գործոնի ազդեցությանը դրանց վրա, էկոլոգիական, կենսական, առողջապահական խնդիրներին: Եվ ամենակարեւորը՝ շեշտը դնելով մարդու պաշտպանվածության, իրավունքների ոտնահարման վրա:

Ձեզ ստեղծագործական բարի երթ: Թող անցնելիք ճանապարհն ավելի արգասաբեր լինի:

Ամուր առողջություն ու անձնական հաջողություններ ենք ցանկանում բոլորիդ:

ԱՀԱ ԱՅՍՊԻՍԻՆ Է ՄԵՐ «ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐԸ»

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Երիտասարդությանս տարիներին ինձ հաճելի զգացողություն էր պատում, երբ որեւէ լրագրում հանդիպում էի Գորիս կամ Զանգեզուր բառերը՝ անկախ նրանից, թե հոդվածն ինչ բովանդակություն ուներ: Կարծում եմ նման զգացողությունը ծանոթ է ընթերցողներից շատերին:

Այս փոքրիկ նախաբանը նրա համար էր, որ ավելացնեմ… Այդ հաճելի պահը վերապրեցի ամիսներ առաջ՝ Երեւանում հյուր լինելուց: Տանտիրոջ սեղանին «հանդիպեցի» «Սյունյաց երկրի» հատուկ համարներից մեկը (այո, հանդիպեցի եւ ոչ թե նկատեցի): Տանտերը որսաց հայացքս, եւ, հասկանալի է, իմ կարծատեւ հյուրընկալության զրույցի թեման արդեն «Սյունյաց երկիրն» էր: Նա ոգեւորությամբ պատմում էր, որ «Սյունյաց երկրի» միջոցով շատ նոր տեղեկություններ է իմացել ծագումով կամ ծնունդով սյունեցի մեծերի, Սյունիքի պատմական հուշարձանների, բնական հարստությունների, դրանց շահագործման, բնապահպանական եւ շատ այլ հիմնախնդիրների մասին: Իսկ մեր երկրի արտաքին ու ներքին քաղաքականության հարցերի վերաբերյալ «Սյունյաց երկրի» մեկնաբանություններին ինքը, նաեւ իր շրջապատը, սպասում են անհամբերությամբ:

Հյուրընկալիս տրամադրող խոսքը լսելուց հետո փոքր ճշտումներ կատարեցի. լրագրի խմբագրությունն աշխատում է ոչ թե Գորիսում, այլ Կապանում, իսկ թերթը տպագրվում է Երեւանում, ու ես էլ անձամբ ճանաչում եմ խմբագրին: Մի խոսքով՝ ոգեւորությունս մեծ էր, որ զրուցակցիս մոտ, հավանաբար, տպավորություն ստեղծվեց, թե ես էլ դերակատարում ունեմ լրագրի ստեղծման գործում:

Ի սկզբանե տպագիր լրատվամիջոցի դերը եղել է տեղեկատվություն տալը, այն էլ՝ հնարավորինս արագ: Բայց հայտնի պատճառներով այս հանգամանքը մղվել է երկրորդ պլան: Տպագիր լրատվամիջոցը նոր առաքելություն է ստանձնել, այն է՝ մեկնաբանել իրողությունները, ուղղություն տալ ընթերցողին: Բայց միշտ չէ, առավել եւս բոլոր թերթերն ու ամսագրերը չէ, որ դա կատարում են անաչառ:

Մասնագիտությամբ ուսուցիչ եմ: Գուցե եւ դա է պատճառը, որ այսօրվա մեր կյանքը նմանեցնում եմ մի մեծ դասարանի, ուր ուսուցիչ-աշակերտ սահմանագիծը վաղուց վերացել է. երբեմն ուսուցիչ ես, իսկ ավելի հաճախ՝ աշակերտ: Ու տեղից վեր կացողը սովորեցնում է: Սովորեցնում է՝ ինչպես ապրել, ինչպես շարժվել, որն է ճիշտ, որը՝ սխալ: Խոսքն առաջին հերթին վերաբերում է տպագիր մամուլին: Եվ երբ այս համատեքստում «Սյունյաց երկիրը» համեմատում ենք հանրապետությունում լույս տեսնող լրագրերի հետ, ապա նկատում ենք, որ այն շահեկանորեն տարբերվում է շատ-շատերից: Եթե «Սյունյաց երկիրը» «մաքուր» տեղեկատվություն է տալիս (ասենք՝ հարցազրույց առանց խմբագրման), ապա ինքդ ես պատկերացում կազմում հարցերին պատասխանողի ինտելեկտի, մասնագիտական կարողության եւ այլ հատկանիշների մասին՝ առանց թերթի ուղղորդման: Իսկ եթե քննարկվում է հայրենի եզերքի պրոբլեմատիկ հարցերից մեկը, ու պարբերականն ուղղորդում է քեզ, ապա դա անում է այնպես, որ դու պատրաստ ես լինում կանգնել սահմանը պաշտպանող զինվորի կողքին (եթե խոսքը հայրենիքի պաշտպանությանն է վերաբերում), կամ միանալ «կանաչներին», եթե խոսքը շրջակա միջավայրի պահպանությանն է վերաբերում: Ահա այսպիսին է մեր «Սյունյաց երկիրը»:

Չկա առօրյայի հետ առնչվող որեւէ հարց, որ դուրս մնա նրա ուշադրությունից ու չարժանանա անաչառ գնահատականի: Ավագ սերունդը լավ է հիշում, որ թերթերում տպագրված յուրաքանչյուր քննադատական հոդված քննարկվել է իշխանական համապատասխան օղակում, գնահատական ստացել, ու ձեռնարկված միջոցառումների մասին նույն թերթի միջոցով հրապարակում է կատարվել: Այ, եթե այսօր էլ նման աշխատաոճ կիրառվեր, ու «Սյունյաց երկրի» տասը ելույթից գոնե մեկ-երկուսին լիարժեք ընթացք տրվեր, ապա մեր կյանքն էականորեն կփոխվեր դեպի լավը: Ասվածի բացակայությունը, մինչդեռ, խոսում է մեր երկրում մամուլի իրական ազատության իրական գոյության ինքնանպատակ լինելու մասին:

Առիթը կա, եւ գայթակղությունը մեծ է երկու խոսք ասելու հոբելյարի աչքի ընկնող արժեքներից մեկի մասին եւս: Դա ամեն մի համարի բնաբանն է՝ գրված գլխագրի մոտ: Հերթական համարը ստանալուց առաջինն այն եմ ընթերցում: Համոզված եմ, որ «Սյունյաց երկրի» ճակատի այդ մի քանի տողը շատերին է ստիպել նորից կապվել գրականության, մշակույթի, փիլիսոփայության, քաղաքականության հանճարների երկերին: Այսօրվա հոբելյարի շատ համարներ քննարկվում են ընթերցողների բազմաթիվ փոքր խմբերի կողմից, այդ թվում նաեւ իմ շրջապատում: Թերթի բնաբանների թեմայով իմ կողմից այդտեղ արտահայտված մտքերից մեկը համարձակվում եմ բարձրաձայնել. տարիներ անց «Սյունյաց երկրի» բնաբանների թեմայով թեկնածուական թեզ են պաշտպանելու:

Իսկ առայժմ՝ շնորհավոր տասնամյակդ, մինչ նոր հանդիպում:

ԱՍՏՎԱԾ ԳՏՆՈՒՄ Է ԸՆՏՐՅԱԼՆԵՐԻՆ

ՌՈԲԵՐՏ ԿԱՄՈՅԱՆ

Գեղանկարիչ

Գաղափարներն են տիրում աշխարհին, իսկ բանականության եւ զգացմունքի, ազատության եւ անհրաժեշտության, անհատականի եւ հանրայինի բախումների արդյունքում ծնվում է առաջընթացը: Ս.Ա.-ն իր ապրած կյանքով ու գործով հավաստում է այդ ճշմարտությունները եւ ապահովում անցյալի ու ներկայի կապը: Եվ այդ ամենը՝ համարից համար:

…Աստված գտնում է ընտրյալներին, եւ նա է ընտրյալը: Այո՛, մեր մեջ նա է ընտրյալը: Եթե նա չէ, ապա ուրիշ ո՞վ է:

Որպես գեղագետ՝ ընդհանրացնում է պատմական կերպարներն ու իրադարձությունները եւ խցկում շրջանակի մեջ: Ս.Ա.-ն վեր է լուծում մերօրյա իրադարձությունները, ոչ պետքականը մեզանից հանելու անողոք քայլեր անում, մտածում է, բանավիճում, առաջարկում, դիտարկում… երբեմն էլ իբր թե համաձայնում է, բայց իրենն է անում: Նայեք թերթի բացառիկ համարները՝ նվիրված Ակսել Բակունցին, Սուրբ Գրիգոր Տաթեւացուն, Նիկողայոս Ադոնցին, Խաչատուր Աբովյանին, Մելիք Հայկազնին, Գորիսին, Վահանավանքին… Դրանցից յուրաքանչյուրը մի յուրատեսակ հանրագիտարան է, որոնց մեջ, ցանկության դեպքում, կարելի է սպառիչ տեղեկություններ գտնել տվյալ թեմայի վերաբերյալ:

Կան մարդիկ, ովքեր, չնայած առկա դժվարություններին, գնում են իրենց ուղեցույց աստղի հետեւից: Եվ այդպիսիներից է ինքը՝ Ս.Ա.-ն:

Իսկ ո՞վ է ի վերջո Ս.Ա.-ն: Նա Սամվել Ալեքսանյանն է՝ մեր ընկերը, մեր բարեկամը, մեր օրերի ճշմարիտ մտավորականը եւ «Սյունյաց երկրի» խմբագիրը:

Ողջույն քեզ՝ իմ ժողովրդի պայծառ զավակ, թերթիդ հոբելյանը՝ շնորհավոր:

ՄԵՐ ՏԱՐԵԳԻՐ, ՍԵՐ ԼՐԱԳԻՐ, ԻՄ ԹԵՐԹ…

ՌՈԲԵՐՏ ԷԶԱՆԱՆՑԻ

Երկրամասի հիմնախնդիրների տողացի լուսաբանումներով, մոտ ու հեռավոր անցյալների իրադարձությունների նորահայացք բացահայտումներով, արդի ժամանակի երեւելիների խոսք ու խրատն ի տես դնելով, երկրում ու հարեւանի տանն ի հայտ եկած նորարարությունների հաղորդումներով, գալիք ժամանակին միտված կանխասացություններով, հայրենի եզերաց անունն առած թերթն իր մագաղաթահուշ ու համացանցային տարբերակներով ԶԼՄ-ական բազմաճակատ ճանապարհին ակամա շրջանցել է պահանջարկի անորոշ պատնեշը եւ մարզի ու նրա սփյուռքի համար դարձել հոգեւոր սննդի ամենահամեղ տեսակը:

Որպես ընթերցող չճանաչվածների մի բազումք է հայտնվել, որ չի կարեւորում հղումն այն աղբյուրին, որից առել է իրազեկվածությունը, փաստարկումը, մեկնաբանությունը, թեպետ ակնբախ է՝ դա մարզոստանում արարվող հեղինակավոր պարբերականն է:

Հայրենիքի նորացումը ոգեկոչող կամ առաջընթացին դիմակայող իրադարձությունների խորազնին վերլուծություններով, պատմական անցյալի վրա նոր քննություն ու լույս սփռելով, սյունեցիական ֆենոմենը նորովի ի ցույց դնելով, հոբելյար լրատվամիջոցն ընդամին վերաճել է գիտահետազոտական յուրատիպ պարբերականի: Ներկա եւ ապագա հետազոտողների համար հույժ անհրաժեշտ ու կողմնորոշիչ բնույթ ունեն խմբագրակազմի տքնաջան աշխատանքի արգասիք համապարփակ անվանական համարները, որոնք անակնկալի են բերել անգամ աշխարհի տարբեր ծագերում հայտնված մեր ուսյալներին…

Առանձնյակ-համարի՝ ջանադիր գլխաբերված ուղղորդիչ բնաբան խոսքը, գլխավոր խմբագրի՝ մարզի հասարակական կյանքի հեւքը ջերմաչափի զգայնությամբ ու ճշգրտությամբ արտացոլող առաջնորդողը մեկեն պարպում են ընթերցողի ապրիորի տարակուսանքները: Հայրենիքի զարգացման հետնախորքի վրա Սիսիանի, Գորիսի, Կապանի, Մեղրու երբեմնի ինքնաբավ միջավայրերը թերթի ծանրակշիռ նպաստով ու հետեւողականությամբ մերձեցել ու զորանում են աննախընթաց մշակութաբանական ընդհանրություններով, ստեղծագործական պաթոսի նոր ընկալումներով:

Մեր ժամանակներում, ակներեւ, որոշ լրատվամիջոցներ անբացատրելի հրապույր ունեն առ էժանագին ցնծալուր տեղեկատվությունը, անփույթ-այպանելի վերաբերմունք՝ գրավոր խոսքի մշակույթի նկատմամբ, ինչից համառորեն զերծ է մեր հոբելյարը, դեռ ավելին՝ հայտնվել է այդ տկարությունների՝ մարտնչող հաղթահարողների փաղանգում:

Գյուղքղթակցի հոգեհարազատությամբ անձնավորում եմ Քեզ՝ «Սյունյաց երկիր», սեր լրագիր, մեր տարեգիր, թերթ իմ, դեռ տասնամյա ես, տարիքով՝ խոխա, ում թուշիկը պաչում եմ: Մաղթում-ակնկալում եմ բազում տասնամյակներ, մերօրյա շնորհաշատ լրագրողների հանրույթից ու առիթքնող ավանդույթներից շառավիղված նոր խմբագրակազմեր…

Հետաքրքիր հայացք

■ **2003** թ. հոկտեմբերի 22-ին, «Սյունյաց երկիր» թերթի խմբագրության նախաձեռնությամբ, Կապանում կազմակերպվեց «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի՝ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի քննարկում, որի արդյունքում ընդունվեց հայտարարություն: Քննարկմանը մասնակցում էր մարզի 14 գործող լրատվամիջոցի, մարզային թղթակցական կետերի 30 ներկայացուցիչ:

■ 2004թ. հոկտեմբերի 13-ին երեք հոգի փայտյա մահակներով գրոհել են «Սյունյաց երկիր» թերթի խմբագրության վրա: Գրոհայինները ցանկացել են պարզել, թե ինչու է թերթը քննադատել ՀՀ վարչապետին ու Սյունիքի մարզպետին:

■ 2004թ. դեկտեմբերի 8-ին Կապանում ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Վլադիմիր Պրյախինը հանդիպել է «Սյունյաց երկրի» խմբագիր Սամվել Ալեքսանյանի հետ եւ հայտարարել, որ թերթի շուրջ ստեղծված վիճակը գտնվում է ԵԱՀԿ ուշադրության կենտրոնում:

■ 2005թ. լույս ապրիլի 1-ի գիշերը Գորիսում հրկիզվել է «Սյունյաց երկիր» թերթի խմբագրի «Նիվա» մակնիշի մեքենան: Տեղի ունեցած առիթով նույն օրը հայտարարությամբ հանդես եկավ խմբագրությունը: Մարզային դատախազությունը չկարողացավ բացահայտել գրեթե ակնհայտ այդ հանցագործությունը:

■ BBC-ի ներկայացուցիչ Զոն Ռոբերթսոնը 2005թ. սեպտեմբերի 27-ին այցելեց «Սյունյաց երկիր» թերթի խմբագրություն: Ս.Ալեքսանյանը հյուրի խնդրանքով ներկայացրեց թերթի շուրջ տեղի ունեցող իրադարձությունները:

■ Նշանավոր արձակագիր Լեւոն Խեչոյանը 2006թ. մայիսի 22-ին մարզ էր ժամանել մի առաքելությամբ՝ հետաքրքրվել «Սյունյաց երկիր» թերթի որպիսությամբ, մոտիկից ծանոթանալ թերթի խմբագրակազմին, թերթի առջեւ ծառացած խնդիրներին: Խմբագրատանը կազմակերպված հանդիպումը, որին մասնակցում էին թերթի բարեկամները, հնարավորություն էր ծանոթանալու նաեւ նրա ստեղծագործություններին, գրական հայացքներին:

■ 2 դեկտեմբերի 2011թ., Սիսիան, Համո Սահյանի անվան մշակութային կենտրոնում տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված Նիկողայոս Ադոնցին եւ «Սյունյաց երկրի»՝ աշխարհահռչակ գիտնականին նվիրված համարին:

■ Այռեքս-ի «Հայաստանյան զանգվածային լրատվամիջոցների աջակցման ծրագրի» եւ Ուկրաինայի տեղական լրատվամիջոցների կատարելագործման ինստիտուտի կողմից 2007թ. սեպտեմբերի 23-30-ը կազմակերպվել էր ուսուցողական այցելություն Ուկրաինա: Հայաստանի 10 հոգանոց պատվիրակության կազմում էր Սամվել Ալեքսանյանը:

■ 2008թ. փետրվարի 1-ից մինչեւ այդ տարվա հուլիսի 31-ը «Եվրասիա համագործակցություն հիմնադրամը» թերթի խմբագրությունում իրականացրեց զարգացման դրամաշնորհային ծրագիր:

■ 2008թ. մարտի 16-ին, ժամը 20.00-ի սահմաններում, Գորիս քաղաքի իր բնակարանից ոստիկանության Գորիսի տարածքային բաժին բերման է ենթարկվել «Սյունյաց երկրի» խմբագիր Սամվել Ալեքսանյանը: Դրա համար, ըստ կազմված արձանագրության, հիմք է հանդիսացել ոստիկանության բաժնում ստացված տեղեկատվությունն առ այն, թե Սամվել

■ 23 նոյեմբերի 2012թ., «Ավանգարդ» թերթի խմբագրությունում կազմակերպված «Կլոր սեղանին» մասնակցում էր նաեւ Սամվել Ալեքսանյանը:

■ Մայիս 2004թ., Շուշի: Ադրբեջանի, ԼՂՀ-ի եւ Հայաստանի միջեւ հրադադարի համաձայնագրի կնքման 10-րդ տարեդարձին նվիրված համար պատրաստելու նպատակով ԼՂՀ այցելած լրագրողներին ընդունեց Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

■ 2005թ. ապրիլի 25-ին ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանն ընդունեց «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանին եւ քննարկեց թերթի շուրջ վերջին ամիսներին ստեղծված կացությունը: ՀՀ վարչապետը դատապարտել է «Սյունյաց երկրի» նկատմամբ կատարված ոտնձգությունները եւ համոզմունք հայտնել, որ կատարված դեպքերը կստանան իրավական պատշաճ գնահատական: Անդրանիկ Մարգարյանը կոչ է արել թերթի խմբագրությանն ու տարածքային իշխանությանը՝ առկա հարցերը լուծել բացառապես քաղաքակիրթ եղանակով ու գործող օրենքների շրջանակում:

■ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը 2007թ. հոկտեմբերի 5-ին Սիսիանում ծանոթացավ «Սյունյաց երկիր» թերթի հերթական համարին:

■ 2008թ. հոկտեմբերի 20-26-ն ընկած ժամանակահատվածում Ուկրաինայում գտնվող հայաստանցի լրագրողների պատվիրակության կազմում էր Սամվել Ալեքսանյանը: Հոկտեմբերի 23-ին Մելիտոպոլ քաղաքում հայաստանցի լրագրողներին հանդիպեց ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Վադիմիր Էտուշը, ով Մելիտոպոլ էր ժամանել քաղաքը գերմանական զավթիչներից ազատագրելու 65-ամյակի կապակցությամբ:

Ալեքսանյանը Երեւանում մասնակից է եղել մարտի 1-ի հայտնի իրադարձություններին: Հարցաքննության արդյունքում պարզվել է, որ թերթի խմբագիրը մարտի 1-ին՝ ամբողջ օրվա ընթացքում, գտնվել է Գորիսի իր բնակարանում:

■ 2008թ. նոյեմբերի 26-27-ին թերթի խմբագրությունը հյուրընկալեց դիզայներ Էդուարդ Հենինգերին, ով ժամանել էր ԱՄՆ-ից եւ նպատակ ուներ մասնագիտական իր փորձն ու հմտությունը փոխանցել անկախ լրատվամիջոց «Սյունյաց երկրին»:

■ 2008թ. նոյեմբեր, դեկտեմբեր եւ 2009թ. հունվար ամիսներին «Սյունյաց երկրին» անց է կացրել ընթերցողների քվեարկություն՝ 2008-ի արդյունքներով մարզում եւ մարզի քաղաքներում «Տարվա մարդ» ճանաչելու նպատակով:

■ Կրթության զարգացման (AED) USAID-ի ֆինանսավորմամբ կազմակերպվել էր հայաստանցի ութ լրագրողի այց ԱՄՆ՝ Չիկագո՝ ամերիկյան հետաքննական լրագրության եւ ընտրությունների լուսաբանման փորձին ծանոթանալու համար: Պատվիրակության մեջ էր նաեւ «Սյունյաց երկրի» լրագրող Արմինե Ավագյանը:

■ 2012թ. օգոստոսի լույս 28-ի գիշերը «Սյունյաց երկրի» համացանցային կայքը ենթարկվել է հակերային հարձակման եւ ջարդվել: Խմբագրության եւ ինտերնետ մատակարարի համատեղ ջանքով թերթի էլեկտրոնային կայքն օգոստոսի 28-ին ժամը 11.00-ին վերականգնվել է:

■ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը 2012թ. հոկտեմբերի 27-ին Դիլիջանում՝ կոմպոզիտորների ստեղծագործական տանը հանդիպում է ունեցել ՀՀ ստեղծագործական միությունների ղեկավարների, նաեւ այդ միությունները ներկայացնող երիտասարդ ստեղծագործողների հետ: Հանդիպմանը մասնակցել է նաեւ «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը, ով ելույթ է ունեցել եւ բարձրացրել մարզային տպագիր մամուլին, ինչպես եւ Սյունիքի մարզին առնչվող հարցեր:

■ 2008թ. նոյեմբերի 17-18-ին «Սյունյաց երկիր» թերթի խմբագրություն էին այցելել Ուկրաինայում ճանաչված մի քանի պարբերականի հիմնադիր-հրատարակիչներ՝ «Êðåìåí÷óöüêèé Òåëåãðàôü» հոլդինգից Սերգեյ Կուլյասովը, «Мелитопольские ведомости» հոլդինգից Միխայիլ Կումոկը, Թեոդոսիայում գործող «Êàôà»-ից Իրինա Պրոկոպյուկը եւ Օլեգ Խոմենյուկը՝ Տարածաշրջանային մամուլի զարգացման ինստիտուտից (Կիեւ): Հյուրերը ծանոթացել են թերթի գործունեությանը, առաջարկություններ արել խմբագրակազմին՝ գովազդային աշխատանքների, թերթի իրացման եւ բաժանորդագրության կազմակերպման ուղղությամբ:

■ 2008թ. հունվարի 22-ին ՀՀ վարչապետ, ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանը հարցազրույց տվեց «Սյունյաց երկրի» լրագրողներ Սամվել Ալեքսանյանին, Արմինե Ավագյանին ու Սաթինե Գեւորգյանին (հարցազրույցը՝ թերթի փետրվարի 5-ի համարում):

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿՐԻ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՓՈԽԱԴՐՎԵԼ Է ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ

■ Վահան Սյունեցու հնազանդության խոստումնագիրը («Սյունյաց երկիր», N30 (271), 2012թ., արդի հայերենի վերածեց եւ ծանոթագրեց Հակոբ Քյոսեյանը):
■ Սյունիքի իշխանաց իշխան Վասակի հնազանդության խոստումնագիրը («Սյունյաց երկիր», N30 (271), 2012թ., արդի հայերենի վերածեց եւ ծանոթագրեց Հակոբ Քյոսեյանը):
■ Ձվանշեր իշխանի հնազանդության խոստումնագիրը («Սյունյաց երկիր», N30 (271), 2012թ., արդի հայերենի վերածեց եւ ծանոթագրեց Հակոբ Քյոսեյանը):
■ Հատված Հ.Միքայել Չամչյանի «Հայոց պատմություն» աշխատությունից («Սյունյաց երկիր», N30 (271), 2012թ., արդի հայերենի վերածեց եւ ծանոթագրեց Հակոբ Քյոսեյանը):
■ Հատված Ղեւոնդ Ալիշանի «Սիսական» գրքից (Կապանի տարածաշրջանին վերաբերող մասը), («Սյունյաց երկիր», N30 (271), 2012թ., արդի հայերենի վերածեց եւ ծանոթագրեց Հակոբ Քյոսեյանը):
■ Հատված Ղեւոնդ Ալիշանի «Սիսական» գրքից, Զագեձոր («Սյունյաց երկիր», N10 (229), 2011թ., արդի հայերենի վերածեց եւ ծանոթագրեց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մկրտչյանը):
■ Հատված Ղեւոնդ Ալիշանի «Սիսական» գրքից (Գրիգոր Տաթեւացուն առնչվող մասը): Արդի հայերենի փոխադրեց Հակոբ Քյոսեյանը («Սյունյաց երկիր», N16 (213), 2010թ.):
■ Գրիգոր Տաթեւացու բժշկագիտական հայացքները (հատված Լեւոն Հովհաննիսյանի «История медицины в Армении» գրքից), թարգմանությունը՝ Վահրամ Օրբելյանի, («Սյունյաց երկիր», N16 (2013), 2010թ.):
■ Հատված Ղեւոնդ Ալիշանի «Սիսական» գրքից (Մեղրու շրջանին վերաբերող մասը): Արդի հայերենի վերածեց Հակոբ Քյոսեյանը: Կտպագրվի Մեղրուն նվիրված հատուկ համարում:

Մասնակցություն

«Սյունյաց երկրի» թեմապիկ համարները

ԱՌԱՆՑ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԻ

- №7 (7), 10 դեկտեմբերի 2003թ., նվիրված է Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու 175-ամյակին, 1 տպագրական մամուլ, հովանավոր՝ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ (գլխ. տնօրեն՝ Մաքսիմ Հակոբյան):
- №11-12 (19-20), 14 ապրիլի 2004թ., նվիրված է Համո Սահյանի 90-ամյակին, 2 տպագրական մամուլ, հովանավոր՝ «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ (տնօրեն՝ Մարտուն Հակոբյան):
- №18-19 (26-27), 25 մայիսի 2004թ., Ադրբեջանի, ԼՂՀ-ի եւ Հայաստանի միջեւ հրադադարի համաձայնագրի կնքման 10-րդ տարեդարձին նվիրված, 2 տպագրական մամուլ, հրատարակվել է թերթի միջոցներով:
- №26-27 (34-35), 13 օգոստոսի 2004թ., նվիրված է Հայաստանի էներգետիկայի առաջնեկի՝ Ողջի գետի վրա կառուցված հէկի 100-ամյակին, 2 տպագիր մամուլ, հրատարակվել է թերթի միջոցներով:
- №7-8 (56-57), 18 փետրվարի 2005թ., նվիրված է Հրանտ Մաթեւոսյանի 70-ամյակին, 2 տպագրական մամուլ, հրատարակվել է թերթի միջոցներով:
- №12-14 (61-63), 6 ապրիլի 2005թ., նվիրված է Մեծ եղեռնի 90-ամյակին, 3 տպագրական մամուլ, հրատարակվել է թերթի միջոցներով:
- № 16-18 (65-67), 7 մայիսի 2005թ., նվիրված է Մեծ հայրենականի հաղթական ավարտի 60-ամյակին եւ այդ պատերազմին սյունեցիների մասնակցությանը, 3 տպագրական մամուլ, հովանավոր՝ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյան:
- №20 (69), 3 հունիսի 2005թ., նվիրված է Կապանի երաժշտական ուսումնարանի 40-ամյակին, 1 տպագրական մամուլ, հովանավոր՝ երաժշտական ուսումնարանի տնօրինություն (տնօրեն՝ Լիանա Հակոբյան):
- №23-26 (72-75), 15 հուլիսի 2005թ., նվիրված է հայոց գրերի 1600-ամյակին, 4 տպագրական մամուլ, հրատարակվել է թերթի միջոցներով:
- №13 (104), 25 հուլիսի 2006թ., նվիրված է Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-ամյակին, 4 տպագրական մամուլ, հովանավոր՝ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ (գլխ. տնօրեն՝ Մաքսիմ Հակոբյան):
- №6 (97), 30 մարտի 2006թ., նվիրված է Տաթեւի մեծ եւ աստվածահաճո տաճարի հիմնադրման 1100-ամյակին, 4 տպագրական մամուլ, տպագրվել է երկու անգամ, առաջինի հովանավոր՝«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ (գլխ. տնօրեն՝ Մաքսիմ Հակոբյան), երկրորդի հովանավոր՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյան:
- №1 (113), 17 հունվարի 2007թ., Աշուղ Աշոտ. Զանգեզուր աշխարհի նահապետը, 4 տպագրական մամուլ, տպագրվել է երկու անգամ, առաջինի հովանավոր՝«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ (գլխ. տնօրեն՝ Մաքսիմ Հակոբյան), երկրորդի հովանավոր՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյան:
- №17 (129), 10 հոկտեմբերի 2007թ., նվիրված է 1937թ. բոլշեւիկյան-ստալինյան բռնությունների 70-ամյակին, 4 տպագրական մամուլ, հովանավոր՝ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ (գլխ. տնօրեն՝ Մաքսիմ Հակոբյան):
- №5 (117), 31 մարտի 2007թ., նվիրված է Սյունիքի նշանավոր կանանց (Ավետման տոնի ու Մայրության եւ գեղեցկության տոնի առիթով), 3 տպագրական մամուլ, հրատարակվել է խմբագրության միջոցներով:
- №3 (115), 20 փետրվարի 2007թ., նվիրված է Եղիշե Չարենցի 110-ամյակին, 5 տպագրական մամուլ, հովանավոր՝ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ (գլխ. տնօրեն՝ Մաքսիմ Հակոբյան):
- №10-11 (146-147), 26 ապրիլի 2008թ., նվիրված է 1918թ. մայիսյան հերոսամարտին, 5 տպագրական մամուլ, հովանավոր՝ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ (գլխ. տնօրեն՝ Մաքսիմ Հակոբյան):
- №22-23 (158-159), 27 օգոստոսի 2008թ., Քաջարանը 50 տարի առաջ դասվեց շրջանային քաղաքների շարքը, 8 տպագրական մամուլ, հովանավոր՝ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ (գլխ. տնօրեն՝ Մաքսիմ Հակոբյան):
- №24-25 (160-161), 10 սեպտեմբերի 2008թ., 1600-ամյա Կապանը 70 տարի առաջ վերստին ստացավ քաղաքի կարգավիճակ, 8 տպագրական մամուլ, հովանավոր՝ «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ (գլխ. տնօրեն՝ Ռոբերտ Ֆալետտա):
- №13 (185), 8 հունիսի 2009թ., Ակսել Բակունցի 110-ամյակը, 8 տպագրական մամուլ, հովանավորներ՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյան, մոսկվայաբնակ գորիսեցիներ Գագիկ Հայրումյան, Ալբերտ Տոռոզյան, Էդիկ Մարդյան:
- №19 (191), 10 հոկտեմբերի 2009թ., Ագարակ քաղաքի հիմնադրման 60-ամյակը, 5 տպագրական մամուլ, համարի հովանավորներ՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյան, «Գեոպրոմայնինգ» խմբի նախագահ Ռոման Խուդոլի, Ագարակի քաղաքապետ Մխիթար Զաքարյան, «Մեղրու ՃՇՇՀ» ՍՊԸ տնօրեն Ազատ Գասպարյան, երեւանաբնակ ագարակցի Հայրապետ Հայրապետյան:
- №23 (195), 10 դեկտեմբերի 2009թ., Խաչատուր Աբովյանի 200-ամյակը, 10 տպագրական մամուլ, համարի հովանավոր՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյան:
- №16 (213), 25 սեպտեմբերի 2010թ., նվիրված է Սուրբ Գրիգոր Տաթեւացու հիշատակին՝ նրա ննջման եւ սրբերի դասին միանալու 600-ամյակի առիթով, 11 տպագրական մամուլ, հովանավորներ՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյան, Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Յուրի Սաֆարյան, «Հենրիկ եւ որդիներ» ՍՊԸ տնօրեն Հենրիկ Հարությունյան, «Առանցք» ՍՊԸ տնօրեն Գագիկ Առուշանյան:
- №8 (227), 4 մայիսի 2011թ., Ռաֆիկ Մինասյան, հովանավոր՝ Կապանի քաղաքապետ Արտուր Աթայան, 8 տպագրական մամուլ:
- №10 (229), 28 մայիսի 2011թ., Գորիս քաղաքի հիմնադրման 140-ամյակը, 30 տպագրական մամուլ, հովանավորներ՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյան, Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյան:
- №17 (236), 18 հոկտեմբերի 2011թ., Նիկողայոս Ադոնց. աշխարհահռչակ հայագետն ու բյուզանդագետը Սիսիանից, 15 տպագրական մամուլ, հովանավորներ՝ Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյան, Սյունիքի մարզի սերմ արտադրողների միության նախագահ Գագիկ Խաչատրյան, Բռնակոթի գյուղապետ Ատոմ Առաքելյան:
- №30 (271), 15 դեկտեմբերի 2012թ., Վահանավանք, 20 տպագրական մամուլ, հովանավոր՝ «Վահանավանք» պատմամշակութային ՀԿ (նախագահ՝ Սասուն Մանուկյան):
- №7 (280), 30 մարտի 2013թ., Մելիք Հայկազն 2-րդ, 8 տպագրական մամուլ, հովանավորներ՝ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյան, Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյան:

Գրություններ

«Սյունյաց երկիրը» տասը տարի շարունակ տպագրվել է «Տիգրան Մեծ» հրատարակչությունում

«Տիգրան Մեծ» հրատարակչությունը փակ բաժնետիրական ընկերություն է, որը հիմնվել է 1997 թ., հանդիսանում է մեծ կառուցվածք՝ իր բոլոր տպագրական հնարավորություններով: Ունի արդիական եւ հարուստ գունաբաժանման, համակարգչային եւ տպագրական համակարգ: Հրատարակչության ուժերով իրականացվում են գեղարվեստական ձեւավորումներ, դիզայն, տեխնիկական սրբագրում եւ այլ նախապատրաստական աշխատանքներ ամսագրերի, գրքերի, թերթերի, բուկլետների, պրոսպեկտների եւ այլ տպագրությունների համար:

Հիմնադրման առաջին իսկ օրվանից «Սյունյաց երկիր» թերթը համագործակցել է «Տիգրան Մեծ» հրատարակչության հետ՝ տպագրելով իր բոլոր համարները մեր տարանում: Եվ այդպես՝ 10 տարի շարունակ:

«Տիգրան Մեծ» հրատարակչության տնօրինությունը եւ անձամբ Վրեժ Մարկոսյանը շնորհավորում են «Սյունյաց երկիր» թերթի հոբելյանը՝ աշխատանքային կոլեկտիվին ցանկանալով հետագա հաջողություններ իր պատասխանատու եւ ազգօգուտ գործում՝ ի շահ Սյունյաց աշխարհի:

«Տիգրան Մեծ» հրատարակչության տնօրինություն

ՖՈՏՈԼՈՒՐ

Սյունյաց երկիր
ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: ® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 5 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 28.10.2013թ.:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿՐԻ» ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄՆ ԱՅՍՕՐ

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Գլխավոր խմբագիր

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
Գլխավոր խմբագրի տեղակալ

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ
Պատասխանատու քարտուղար

ԳԱՅԱՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Հաշվապահ

ԳՐԻԳՈՐԻ ՍԱՀԱԿՅԱՆ
Ձեւավորող

ՍԼԱՎԻԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Սրբագրիչ

ՋԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Լրագրող

ՆՈՒԲԱՐ ԴԱՎԹՅԱՆ
Լրագրող

ՄԱՆԵ ԴԱՎԹՅԱՆ
Լրագրող

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Համակարգչային օպերատոր

ԱՆՆԱ ՊԱՊՅԱՆ
Համակարգչային օպերատոր

ՎԱՍԻԼ ՍԱՀԱԿՅԱՆ
Ներկայացուցիչ Երեւանում

ՆԱԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔ

- Հայ մամուլի օրվա առթիվ 2006թ. հոկտեմբերի 16-ին, «Սյունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանն արժանացել է Հայաստանի ժուռնալիստների միության «Ազդարար» մրցանակին:
- Արմինե Ավագյանն «էկոլուր» ՀԿ-ի, ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի՝ «Անապատացման թեժ կետերը Հայաստանում» խնդրի մարզային լավագույն լուսաբանման համար 2006թ. արժանացել է մրցանակի:
- Արմինե Ավագյանը 2008-ին, նախագահական ընտրությունների լուսաբանման համար, արժանացել է Այռեքս-ի եւ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ծրագրի մրցանակին:
- Կանանց հանրապետական խորհուրդը շնորհակալագրով պարգեւատրել է Վահրամ Օրբելյանին՝ կազմակերպության գործունեությունն ակտիվորեն լուսաբանելու համար՝ առանձնահատուկ ընդգծելով նրա ներդրումը երիտասարդության դաստիարակության գործընթացում:
- Արմինե Ավագյանը 2009թ. մարտի 8-ին արժանացել է Սյունիքի մարզպետարանի շնորհակալագրի՝ մարզի սոցիալ-տնտեսական եւ մշակութային կյանքի լուսաբանման, հասարակության հետ կապերի ամրապնդման գործում ներդրման համար:
- «Սյունյաց երկիր» թերթը 2010թ. հուլիսի 10-ին ճանաչվել է Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության, ՀՀ սփյուռքի նախարարության եւ Հայաստանի ժուռնալիստների միության կողմից հայտարարված «Աշխարհի հետ՝ մեր ինքնությամբ, Հայաստանը համայն հայության հայրենիքն է» մրցանակաբաշխության դափնեկիր:
- 30 հունիսի 2011թ.: Հանրային կյանքի անաչառ լուսաբանման, մարզի պատմական, մշակութային իրադարձությունների, Սյունյաց մեծերի ու նշանավոր անձանց գործունեության, պետական, ազգային, մարզային եւ համայնքային տոների ու միջոցառումների ժողովրդականացման գործում ներդրած ավանդի համար Սյունիքի մարզպետարանը (մարզպետ՝ Սուրեն Խաչատրյան) «Սյունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանին պարգեւատրել է «Ակսել Բակունց» հուշամեդալով:
- Հայաստանի ժուռնալիստների միությունը 2012թ. նոյեմբերի 23-ին Սամվել Ալեքսանյանին պարգեւատրել է «Հավատարիմ մասնագիտությանը» ոսկե մեդալով:
- Հայաստանի ժուռնալիստների միության «Հավատարիմ մասնագիտությանը» ոսկե մեդալով 2012թ. նոյեմբերի 29-ին պարգեւատրվել է «Սյունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագրի տեղակալ Վահրամ Օրբելյանը:
- Մեղրու սահմանապահ ջոկատի (№2393 զորամաս) հրամանատար, գնդապետ Ա. Շադրինը Ռուսաստանի սահմանապահ զորքերի կազմավորման 95-ամյակի կապակցությամբ 2013թ. մայիսի 28-ին շնորհակալագիր է հանձնել Սամվել Ալեքսանյանին՝ Հայաստանի պետական սահմանի հուսալի պաշտպանությունն ակտիվորեն լուսաբանելու համար:

ՆՐԱՆՔ ԵՆ ԽՄԲԱԳՐԵԼ ՄԱՐԶԱՅԻՆ «ՍՅՈՒՆԻՔ» ԵՎ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ԹԵՐԹԵՐԸ



ԳԱԳԻԿ ԴԱՎԹՅԱՆ
«Սյունիք» թերթի խմբագիր

ՆԱՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
«Սյունյաց աշխարհ» թերթի խմբագիր

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
«Սյունյաց աշխարհ» թերթի խմբագիր

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
«Սյունյաց աշխարհ» թերթի խմբագրի տեղակալ

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
«Սյունյաց աշխարհ» թերթի խմբագրի պաշտոնակատար, ապա՝ խմբագիր

էջեր պատմությունից

Լուսանկարը՝ Կ.Հովհաննիսյանի

2013թ. օգոստոսի 25-ին «Սյունյաց երկրի» արշավախումբը, ուղեկցությամբ Իշխանասարի գյուղապետ Արարատ Պետրոսյանի եւ Սիսիանի բնակիչ Սամվել Դովլաթյանի, այցելեց Ուղտասար եւ ծանոթացավ 3300մ բարձրության վրա գտնվող ժայռապատկերներին:

Հայրենի եզերք՝ մեր կենսունակության առհավատչյան

Սյունիքը մանրամասն ճանաչելու մղումով «Սյունյաց երկրի» արշավախմբի շրջագայությունները. մի քանի դրվագ

2006թ. նոյեմբերի 6-ին «Սյունյաց երկրի» աշխատակիցներն ուխտագնացություն կատարեցին Վարդան Մամիկոնյանի՝ Անգեղակոթում գտնվող գերեզման, ինչպես եւ նույն գյուղի մերձակայքում գտնվող Սբ Վարդան եկեղեցի:

- 2009թ. հուլիսի 29-ին «Սյունյաց երկրի» արշավախումբը, ուղեկցությամբ Մեղրու սահմանապահ ջոկատի զինվորների, այցելեց Ծիրանաձոր եւ հասավ մինչեւ Նախիջեւանի սահմանը:
- 2011թ. հոկտեմբերի 11-12-ին «Սյունյաց երկրի» արշավախումբը, Մեղրու քաղաքապետ Սերգեյ Հայրապետյանի աջակցությամբ, Մարատ Օհանյանի քաջալերանքով, Նաիրա Հայրապետյանի, Արմեն Նիկողոսյանի, Գրենա Սարգսյանի եւ լուսանկարիչ Համլետ Գեւորգյանի (Կապանից) ուղեկցությամբ, եղավ Մեղրու շրջանի ամայացած գյուղերում՝ Վերին Մանլեւ, Ափկեզ, Թոս, Քուջերթ, Մանլեւի կուսանաց անապատ, Աղավնակ…
- 2012թ. դեկտեմբերի 7-ին «Սյունյաց երկրի» արշավախումբը, օժանդակությամբ Հալիձորի գյուղապետ Սամվել Ասրյանի, ուղեկցությամբ Էդիկ Մկրտչյանի, վարորդ Բաբկեն Հակոբյանի եւ լուսանկարիչ Կարեն Հովհաննիսյանի, այցելեց Հարանց մեծ անապատ:
- 2013թ. մարտի 3-ին «Սյունյաց երկրի» արշավախումբը, ուղեկցությամբ Ռեդիկ Հայրապետյանի, Յուրի Ջավահիրյանի ու Յուրի Ալեքսանյանի, այցելեց Խանածախի անապատ (Անապատի ձոր): ■

Լուսանկարը՝ Կ.Հովհաննիսյանի

2012թ. դեկտեմբերի 23-ին «Սյունյաց երկրի» արշավախումբը, ուղեկցությամբ Խանածախի գյուղապետ Կարո Թավադյանի եւ լուսանկարիչ Կարեն Հովհաննիսյանի, այցելեց Ծիծեռնավանք եւ Մելիքաշեն, որ գտնվում են Սյունիքի Աղահեճք գավառում:

Լուսանկարը՝ Գ.Սահակյանի

2013թ. օգոստոսի 9-ին «Սյունյաց երկրի» արշավախումբը, ուղեկցությամբ Լիճքի դպրոցի տնօրեն Էմմա Պողոսյանի որդի Կարապետ Հովհաննիսյանի, այցելեց Ջվարի ջրվեժներ, որ գտնվում են Գողթանասարի արեւելահայաց լանջին: